

ՀՎՀԿ

ՆԵ ԲԵՐՐԱՅՈՒՆ.

ՀՎՀԿ 1242

# ՄԻԱԿՆՈՒԹԻՒՆ

bh

## ԲՈՂԱՄԱԿՆՈՒԹԻՒՆ

Ը Բ Ա Խ Ե Ր

ՔԻՒՍԻՍՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ



ԹԱՐԳՄԱՆԵՑ ԱՌԱՋԵՐԵՐԻՑ

ԱՐԵԱԿ ԵԴԻԳԱՐԵԱՆ.



ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ Գ. ԲԱՐԵՎԻԿԱՐԵԱՆԻ

1896

(84)

Հայ

956

Տույ 356

1292

2013

ԲԵՐՐԱՍԵՐՆԵ ԲԵՐՐԱՍՈՆ.

PA  
27789

## ՄԻԱԿՆՈՒԹԻՒՆ

եհ

## ԲՈԶՄԱԿՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՊՈՒՏԵՐՔՆԵՑ

ԱՐՏԱԿ ԵԴԻԳԱՐԵԱՆ.



ԻՄ ՀՆԿԵՐ

# ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆԻՆ

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 19 Нояб. 1895 г.

ՆՈՒԿԵՐ

ԹԱՐԳՄԱՆՉԻՑ.

Типогр. Х. Бархударянъ, Москва, Мясниц., д. Ермакова.

1003



956-2013

Դ.8, 951

1881 թուի մայիսին, հռչակաւոր նորվեգիացի բանաստեղծ Վերգելանդի արձանի հանդիսաւոր բացման ժամանակ, Բեօրնստերնէն, ի միջի այլոց, ասաց հետեւալը.

«Ես կարծում եմ, բոլոր ներկայ եղողները գիտեն այն սրտաշարժ սովորութեան մասին, որ Հայնրիխ Վերգելանդը իւրացրել էր իւր կեանքի վերջին տարիներում, —շըջել գրպանները լրած ծառերի սերմերով որոնց նա ժամանակ առ ժամանակ ցանում էր ու բռներով ցրփում ճանապարհին. բայցի այդ նա հրաւիրում էր իւր ընկերներին էլ հետեւել իւր օրինակին, ասելով՝ «ով գիտէ, որքան բարի բան կարող է զուրս գալ զրանից»։ Այս պարզ խօսքերի մէջ, որոնք շնչում են այնպիսի միամիտ, հոգատար սիրով դէպի ծննդափայրը, ամփոփվում է մի ամբողջ քեր-

թուած, որ, կարելի է ասել բնաւ պակաս  
չ մեր հռչակաւոր բանաստեղծի լաւա-  
գցն արտադրութիւններից»։ Եւ Բեօրնսօ-  
նը, ինչպէս ասում է Բրանդէսը, իւրեան  
նպատակ է ընարել հետեւ նրան, որի  
մասին խօսում է այզչափ ջերմ համա-  
կրութեամբ, այնպէս որ նա ինքը կատա-  
րելապէս արդարացի կերպով կարող է  
Նորվեգիայի «Հզօր սերմնացան» կոչուել։

Բեօրնսօնի ժայռոտ ծննդավայրը առ-  
հասարակ աղքատ է և սակաւ մշակուած,  
և աշա՞նա անխօնջ աշխատում է նրա  
բարօրութեան համար, նորա մէջ զիտու-  
թեան և ճշմարտութեան սերմեր ցանելով։  
Նատ սերմեր ընկնում են քարոտ գետնի  
վերայ և քամին անհետ կերպով տանում  
է նոցա, բայց որտեղ հող կայ, նա ար-  
գաւանդ է և առատ հունձ է տալիս։

Բեօրնսօնը ծնուել է 1832 թ. գեկտեմ-  
բերի 8-ին Կուրիկնէ աւանում, ուր նրա  
հայրը քահանայ էր։ Աղքատ և ոչ հրա-  
պուրիչ բնութիւնը շրջապատում էր բա-  
նաստեղծի մանկութեան առաջին տարի-  
ները, լերկ ժայռերը և քարերը, ողորմելի  
բուսականութիւնը, անշնորհակալ հողը և

դաժան կլիման, իսկ այդ բոլորի պատճա-  
ռով բնակիչների խիստ սակաւութիւնը,  
որ պատսպարուել է աննշան, մինը միւսից  
հեռու ընկած խրճիթներում։

Մանուկը վեց տարեկան էր, երբ նրա  
հօրը փոխադրեցին ուրիշ համայնք՝ Ռոմս-  
դալէն, որ Նորվեգիայի ամենից նկարագեղ  
և բնակիչներով խիտ անկիւններից մինն  
է։ Բնակութեան նոր տեղի հրաշալի բը-  
նութիւնը և կենդանի, եռանգոտ բնակիչ-  
ները նախկին տեղի հետ համեմատելով  
մէկ այնպիսի պարզ հակապատկեր էին  
ներկայացնում, որ նա չէր կարող չաղգել  
երեխայի զգայուն հոգու վերայ, համեմա-  
տութիւնների, զիտողութիւնների և խոր-  
հրդածութեան հարուստ նիւթ տալով  
նրան։ Երջապատող բնութեան հրաշալի,  
վեհ պատկերների և նրա շուրջը եռացող  
ժողովրդական խայտածամուկ կեանքի ագ-  
գեցութեան առաջ նրա բնաւորութեան բը-  
նածին երեակայութիւնը և բանաստեղծա-  
կան սաղմերը վաղ սկսեցին զորզանալ։  
Իսկ մնացածը լցրեց առաւելապէս ժողո-  
վըրդական հեքիաթների և երգերի, ապա  
հինաւուրց աւանդութիւնների (օգոս), վեր-

ջապէս Վերգելանդի ստեղծագործութիւնների ընթերցանութիւնը:

Տասնուեօթ տարեկան թեօրնսօնը գնաց Քրիստիանիս՝ համալսարանում քննութիւն տալու: Այստեղ նա անց կացրեց մօտաւորապէս երկու տարի, պարապելով գանիական գրականութեամբ և սիրով յաճախելով այն ժամանակ Քրիստիանիայում եղած գեղեցիկ գանիական թատրոնը, որ, առհասարակ, նրա բնաւորութեան գեղարուեստական կողմերի զանգայցման վերայ մեծ ազգեցութիւն ունեցաւ: Բայց այդ նա չը զրկում իրան և ուրիշ՝ երբեմն բաւական ազմկալց բնաւորութիւն ունեցող երիտասարդական զուարձութիւններից: 1852 թուին թեօրնսօնը վերադարձաւ հօր մօտ: Քաղաքային կեանքը կրակոտ երիտասարդի մէջ չը կարողացել ոչնչացնել գեմօկրատի ոգին, որ մանկութիւնից փառ էր նրա մէջ: Գիւղական կեանքը և բնութիւնը առաջուայ պէս սիրելի և մօտ էին նորա հոգուն, և նա այդ ապացուցեց արդէն իւր առաջին բանաստեղծական փորձերով: Դրանք ժողովրդական ոգով գրած երգեր էին, որոնց գիւղացիները երգումէին:

Յապա վերագառնալով Քրիստիանիա, թեօրնսօնը մոտաւ գրական ասպարէզ որպէս կրիտիկոս. կըքոտ, անզամ անզուապ լինելով, իւր գործի մէջ նա շատ վաղ բազմաթիւ թշնամիներ ձեռք բերեց: Այդ ժամանակ նրա սիրած ընթերցանութեան առարկաներն էին, զեռնոր վերջացած գրականական շրջանի մտածողների գործերը, Հէյբերգի, Սիբբերնի և Կիրկիգօրի, որոնցից վերջենը նրա և նրա հռչակաւոր հայրենակից Իրսէնի վերայ ահազին ազգեցութիւն ունէր: Փոքր ինչ ուշ թեօրնսօնին գրաւեց գանիական ուրիշ նշանաւոր գրող՝ Գրունտվիզը: Կենսական, ուրախ վարդապետութիւնը, որ այդպիսի հակաշիռ էր նորվեգիական մռայլ և կեղծ բարեպաշտութեան, և Գրուանտվիզի ջերմ հաւատը գէպի հիւսիսի լուսաւորող և կենզանացնող առաքելութիւնը չէին կարող նորվեգիացի կրակոտ երիտասարդի հոգուն մօտ չլինել, որ տակաւին սակաւ էր ծանօթ Եւրոպայի մտաւոր կեանքի հետ: Ապա զրայի երկրներում մնալով, — մանաւանդ նա երկար ապրեց Կոպենհազէնում, — թեօրնսօնը կամենում էր ձեռք զարկել

իւր մտածած երկու գործողութիւն ունեցող «Նորապսակներ» կօմելիայի մշակութեան: Նախազիծը արգէն պատրաստ էր, բայց երիտասարդ հեղինակը իրան անկարող զգաց զլուխ բերելու այդ, ուստի առժամանակ այդ աշխատութիւնը մի կողմ զրեց և ուրիշ՝ «Ճակատամարտերի մէջ» անունով գրամատիկական երկասիրութիւն զրեց: Այդ երկը մեծ աջողութիւն ունեցաւ որպէս նորփեղիական բեմի վերայ, նոյնպէս և գրականութեան մէջ, բայց, ըսնայած զրան, մերժուեց Կոպենհագէնի արքայական թատրոնի վարչութեան կողմից: Այդ տեսակ ձախորդութիւն այնպիսի աչքի ընկնող զրողի կողմից, որպիսին Ի. Լ. Գևիրքն էր, որ այն ժամանակ զրամատիքական զրաքննչի պաշտօն ունէր, պէտք է բացատրել նոր, անսովոր, օրիզինալ ձեռվ, որի մէջ հէնց առաջին քայլերից թոփուեց, ձուլուեց երիտասարդ նորվեգիացի բանաստեղծի զօրեղը թարմ տաղանդը: Մինչև այն ժամանակ հիւսիսում օրինակելի զրամատիքական բանաստեղծ համարվում էր Ելեն Շլեգէր, իսկ որս զրած պատմական զրամայի ձեւի, երկար շատա-

խօս ճառերի, անփոփոխ համբաների և Բեօրնսօնի կարծ, արձակ ձեւի մէջ եղած տարրերութիւնը այնչափ մեծ էր, որ ոչ միայն հասարակութիւնը, այլ և երգուեալ զրական մարդիկ լարուեցան և չկարողացան վաղ ընտելանալ նորամուծութեան հետ:

Ստեղծագործութեան ձեւի և բովանդակութեան վերաբերմամբ Բեօրնսօնին, — Բրանդէսի խօսքերով, — կարելի է առ հասարակ այն մի քանի գրականական բաղդաւոր մարդկանց թուին վերաբերել, որոնք երկար ժամանակ չխարիսխիցին կամ անաջող կերպով չմաքառեցին յամառ, անշնորհակալ նիւթի հետ, նախ քան նրանց աջողուեց իւրեանց ստեղծագործութիւններին ցանկալի և տնհրատմեշտ նիրքին հաւատարակշուութիւն տալ: Բեօրնսօնը շուտով գտաւ իւր ճանապարհը, այնպէս որ նրա ձիրքը կարող էր շեղուել միանգամից, այսպէս ասած, ամբողջապէս:

Առանձին հիմունքով կարելի է այդ սել նրա ժաղովրդական ողով զրած պատմերների մասին, որոնց նա ձեռք զարկեց իւր առաջին զրամատիքական աշխատու-

թիւնից յետոյ: Մանկութեան և երիտասարդութեան տպաւորութիւնները, որոնց նա ստացել էր ժողովրդի հետ անմիջական կապ և մերձաւորութիւն ունենալով, և ժողովրդական տւանդութիւնների ընթերցանութիւնը բերեցին իւրեանց պառողները: Բեօրնսօնը սովորեց հասկանալ ժողովրդին սագայի (աւանդութեան) լուսաբանութեան մէջ և սագան ժողովրդի լուսաբանութեան մէջ, և հին սագայի ոճը նոր կերպարանքով յարութիւն առաւ նըրա «Սիւննեվէ Սոլլեակկէն», «Հայր» և «Արծուի բունը» գեղարուեստական պատկերների մէջ: Այդ պատկերները, դարձեալ ձեի նորութեան և արտասովոր լինելու պատճառով, հանդիպեցին ոչ սակաւ թունդ պախարակութիւնների, սակայն, փոքր առփոքր, նրանց անկատածելի արժանաւորութիւնները, հոգեկան, մտերմական և փափուկ զգացմունքների պօէզիան, որ զըտուել է զօրեղ, ամուր ձեւերի մէջ, և ժողովրդական ու սիրային երգերի սրտաշարժ, անկեղծ քնարերգութիւնը (լիրիզմъ), որոնք առատօրէն զարդարում են այդ պատկերները, յաղթեցին անարդար նախապա-

շարմունքներին և բանաստեղծի փառքը սկսեց արագ հաստատուել:

Պատկերներին կրկին հետևեցին զրամատիքական զրուածներ, որոնց մէջ Բեօրնսօնի ուժեղ տաղանդը ձգում է իւր վերայից ժողովրդական ոճի նմանողութիւնը և երեան է գալիս աւելի մեծ շրժով և պայծառութեամբ: Խօսելով Բեօրնսօնի մասին, որպէս զրամատիքական զրողի մասին, չէ կարելի չյիշել նրա հոչակաւոր հայրենակից իրսէնի մատին: Հիւսիսային զրականութեան այդ երկու ներկայացուցիչները նցն իսկ իւրեանց հակապատկերներով, փոխագարձաբար, զրեթէ միմեանց լըրացնում են և սառերարկում, այնպէս որ ինքն իրան այստեղ առաջ է գալիս նըրանց համեմատութիւնը: Նրանց որոշող առանձնայատկութիւններից մէկը, ի միջի այլոց, մէկի և միւսի յարաբերութիւնն է դէպի բնութիւնը: Իրսէնը բացառապէս զրամատիքական զրող է և ոչնչ հակում չէ զգում գէպի բնութեան նկարագրութիւնները: Նրա տիպերը — գաղափարների մարմնացութն է, և եթէ բնութիւնը որ և է տեղ փայլում է նրա պիեսաների

մէջ՝ առաւել որպէս նշան է, քան իրականութիւն (օրինակ «Բրանդ»): Բեօրնաօնի լայն, բանաստեղծական ոյժը, ընդհակառակն, սիրով և յօժարութեամբ ընդգրրկում է բնութիւնը, փոխադրելով նրա պատկերները անգամ դրամայի մէջ: («Սիգուրդ Սլեմբէ»):

Զնայած, որ Բեօրնաօնը խոր կերպով ուսումնասիրել է և ծանօթ է բեմին ու նրա պայմաններին և այդ բանի մէջ նա տեղի չէ տալիս իրսէնին (նրանք երկուսն էլ մի ժամանակ թատրոնների վերատեսներ են հղել), սակայն առաջնը իւր զրուածների մէջ երբէք չէ հասնում տեխնիկայի այնպիսի վարպետութեան, որպէս վերջինը՝ իրսէնը, և Բեօրնաօնի շատ զրամաները առաւելապէս լաւ են ընթերցանութեան ժամանակ, սակաւ աջողուելով կամ թէ բոլորովին մինչեւ անգամ անպէտք դառնալով բեմի համար («Սիգուրդ Սլեմբէ», «Գալտէ Գուլզա»): Դրա պատճառը, հարկաւ, այն է, որ իրսէնը մասնագէտ է դարձել դրամատիքական դրականութեան մէջ, մինչդեռ Բեօրնաօնի զրականական զործունէութիւնը անչափ բազմատեսակ է:

Բայցի զրամաներից, կատակերգութիւններից, նա գեռ զանազան մասնագիտական հարցերի վերաբերեալ անթիւ լրագրական յօդուածներ և բրոշեւրներ է գրել առ հասարակ իւր հայրենիքի քաղաքական կեանքի մէջ ջերմ և կենդանի մասնակցութիւն ունենալով:

Բեօրնաօնի ստեղծող զործունէութեան առաջին շրջանի զրամատիքական երկասիրութիւններից ամենամեծ աջողութիւն ունեն որպէս բեմի վերայ, նոյնպէս և զրականութեան մէջ հետեւեալ պիկաները՝ «Մարիա Ստիւարտը Շօտլանդիայում» (1864 թ. 4 հրատ.) և «Նորապսակներ» (1865 թ. 11 հրատ.):

Մենք նոր ասացինք — «առաջն» շրջանի, որովհետեւ Բեօրնաօնի զրականական զործունէութեան մէջ, արդարեւ, երկու առանձին շրջաններ կարելի է որոշել: Առհասարակ նրա տաղանդը բաւական արագ հասունացաւ և զարգացաւ և մի ժամանակ, թւում էր, հասաւ իւր ծայրահեղ աստիճանին և կանգ առաւ անգամ զրեթէ պատրաստ ոչնչանալուն:

Բայց հէնց այդ ժամանակ Դանիա մտան

եւրոպական մտքի նոր հոսանքներ, իսկ այնտեղից նորվեգիա, և Բեօրնսօնի հոգու մէջ, խօսելով նորա սեպհական բառերով, նոր կենսառու աղբիւրներ վագեցին:

Նրա առաջին աշխատաւթիւնը, որով նա ընդհատեց, վերջապէս, արդէն մի քանի տարի տեսող լռութիւնը (այդ ժամանակ նա ծանօթանում էր աչքի ընկնող ուսումնականների գործունէութեան և աշխատութիւնների հետ, որպիսիք են Միլլ Դարվին, Շտեյնտալ և Մաքս Միլլեր), «Սնանկութիւն» կատակերգութիւնն էր, որ իւր ժամանակ մեծ աջողութիւն ուներ և մեզ մօտ՝ Պետերբուրգում, «Ein Fallissement» անունով:

Սյդ պիէսայով որ այդ օրինակ սկիզբ դրեց Բեօրնսօնի ստեղծող գործունէութեան երկրորդ շրջանին, Բեօրնսօնը ուաք դրեց ժամանակակից հասարակական գործունէութեան նոր ասպարէզը: «Սնանկութիւն» հետ միաժամանակ լցու տեսաւ և ուրիշ կատակերգութիւն՝ «Խմբագիր» անխնայ սատիրա (երգիծաբանութիւն) լրագրական գործի վերայ հիւսիսում: Նրանց արագ հետեւցին՝ «Արքայ» լրաման, պատ-

կերներ՝ «Մագնոգիլիք» և «Կապիտան Մակղանա». կատակերգութիւններ՝ «Լեօնարդ» և «Նոր սիստեմ», պատկեր՝ «Փոշի»:

Նոր ուղղութիւնը անյապաղ նոր յարձակումներ գարձրեց Բեօրնսօնի վերայ: Նորա հակառակորդները սկսեցին հաստատել որ նոր երգերը նախկիններից նշանաւոր կերպով թոյլ էին, իսկ յետոյ նորան մեղադրեցին տաղանդի կատարեալ անկման մէջ անգամ: Վերջին մեղադրանքը ոչ մի հիմք չունի: Եթէ Բեօրնսօնի գրականական գործունէութեան երկրորդ շրջանի ստեղծագործութիւնները, արդարեալ տեղի են տալիս առաջին շրջանի արտադրութիւններին գեղարուեստական տեսակէտից՝ լեզուի ներգանակութեան, պատկերների բանաստեղծութեան և ձեւերի մաքրութեան վերաբերմամբ, սակայն շահում են գաղափարների հարստութեամբ, խնդիրների լայնութեամբ և հեղինակի կեանքի վերայ ունեցած հայեացքների ընդհանուր զարգացմամբ:

Բեօրնսօնի վերջին խոշոր երկասիրութիւններից մնում է այստեղ յիշել հետեւալ կատակերգութիւնները՝ «Ուժից

վեր», «Զեռնոյ» և «Աշխարհագրութիւն» և  
սէր» և երկու մեծ վէպեր՝ «Քաղաքը և նա-  
ւահանգիստը զարդարուեցան դրօշակնե-  
րով» տպուած «Սէվերնի Վեստնիկ»-ում  
«Նոր հոսանքներ» վերնագրով և «Աստուա-  
ծային ճանապարհի վերայ» տպուած «Տը-  
րուդ» ամսագրում:

Վերջացնելով ներկայ առաջարանը, ա-  
ւելացնենք զեւ մի քանի խօսք Բեօրն-  
ասնի մասին, որպէս մարդի և հասարա-  
կական գործչի մասին: Նորվեգիայի նը-  
շանաւոր բանաստեղծը ամուսնացած է,  
մի քանի երեխաներ ունի: Որպէս ժողո-  
վըրդակոն կեանքի և բնութեան անկեղծ  
սիրող Բեօրնասնը երկար ժամանակով տպ-  
րում էր իւր «Ֆօլկեր» կալուածքում,  
պարագելով գիւղական տնտեսութեամբ:  
Նա ամենակենդանի մասնակցութիւն ունի  
երկրի քաղաքական կեանքի մէջ, երիտա-  
սարդական տարիներից անջտուողների  
կուսակցութեան պատկանելով, Բեօրնասնը  
եռանդուն կերպով կռիւ էր մղում Նոր-  
վեգիայի քաղաքական անկախութեան հա-  
մար: Սորա հետ պէտք է արդարացի կեր-  
պով ասել, որ չնայած իւր տաք բնաւո-

րութեան և վառ կըքերին, որոնցով նա  
մղում է և միշտ մղել է այդ կոիւր, մա-  
նաւանդ որպէս «Երեկոյեան լրագրի» (Քը-  
րիստիանիա, 1859 թ.) և «Նորվեգիական  
ժողովրդական լրագրի» խմբագիր) 1866—  
67 (թ.), —նա երբէք չգտաւածանեց համես-  
տութեան և համակրութեան զգացմունքին  
դէպի «եղբայրական երկիրը» (Շվեյցիան),  
երբէք չմտածած և վերաւորական բան  
չգրեց վերջնիս հասցէին:

Նատ շնորհալի զրոյներին հակառակ,  
որոնք զուրկ են ձարտարախօսութիւնից,  
Բեօրնասնը հոչակաւոր հռետոր է, իսկա-  
կան ժողովրդական արիբուն (ու ամկապետ):  
Նրա բնական ձիրքերի զարգացման մա-  
նաւանդ նպաստեց նրա Ամերիկայում ա-  
րած Ճանապարհորդութիւնը, ուր նա ծա-  
նօթացաւ լաւագոյն ժողովրդական հռե-  
տորների հետ: Եւ պէտք է ասել որքան  
նա գեղեցիկ կերպով տիրում է զրչին, նր-  
րա Ճարտարախօսութիւնը առաւել զրաւէիչ  
է: Երբէք նա չէ խօսում այնպէս պարզ ան-  
կեղծօրէն, իւր զօրեղ տաղանդի կատարեալ  
փայլով, որպէս կրակոտ Ճառի մէջ ուշաղիր  
լսողների աշաղին բազմութեան առաջ:

Բեօրնսօնը այժմ 62 տարեկան է, բայց,  
որպէս երեսում է, զրած պատկերից, նա  
տակաւին կատարիելսալիք թարմ և առողգ  
է մարմնով ու հօգով, և շարունակում է  
անխոնջ կերպով աշխատել ընթանալով  
իւր թանգագին ուսուցիչ Վիրդելանդի  
շաւզով՝ «մշակելով և ցանելով մայրենի  
հողը»:

Պ. ԳԱՆԶԵՆ.

Ներկայ յօդուածին իբրև առաջարան  
կարող է ծառայել հեղինակի նամակից  
թարգմանչին ուղղած հետեւեալ հատուա-  
ծը՝ «ձառի պատճառը եղան մամուլի մի  
մասի վրդովեցուցիչ յարձակումները աի-  
կին Գրունտվիզի վերայ, որ համարձակ-  
ուել էր ողջախոհութիւն պահանջել հա-  
ւասարապէս, որպէս այր մարդկանցից, նոյն-  
պէս և կանանցից, որ և ողջախոհութիւ-  
նը նպատակ է ընարել, որին պիտի ձգտի  
մարդկային աղղը. այդ յարձակումները այն

Ժամանակ ծագում էին<sup>1</sup> սեռական յարա-  
բերութիւնների մասին Հասարակութեան  
մէջ տիրապետող կեղծ և սուտ ակղեկու-  
թիւններից: Երբ Պարիսից վերադառնում  
էի, առաջ ես մասնաւմ էի կարգալ իմ  
ժառը Կոպէնհագէնում և զեռ մի քանի  
քաղաքներում, բայց ինձ վերայ Սկոնդի-  
նաւիսի ամեն ծայրերից խնդիրքներ թա-  
փուեցան, այնպէս որ, եթէ ես բոլորին էլ  
բաւականութիւն տայի, ես պէտք է մի  
ամբողջ տարի խօսէի:

Ես այցելեցի բոլոր նշանաւոր քաղաք-  
ները և ամենուրեք բազմաթիւ ունինդիր-  
ներ էին ժողովվամ: Ցանկալի նպատակը  
իրազործուած էր: Բոլոր խելացի ծնողները  
բացարձակ կերպով սկսեցին վիճաբանել  
այդ առարկայի մասին իրանց մէջ և լուրջ  
խօսակցութիւնների ժամանակ իրանց որ-  
դոց հետ: Մայրահեղ սահմարձակութիւնը  
և մեր Բօհեմայի անպիտան վերաբերմուն-  
քը զէպի ներկայ առարկան արեցին այն,  
որ սեռական յարաբերութիւնների մասին  
եղած իւրաքանչիւր խօսք դադարեց հնա-

բաւոր լինել բայց ես դուռը բացեցիս եւ  
որպէս այդ գործը, նշյնպէս և իմ աշխա-  
տութիւնները «խաղաղութեան» հարցի  
վերաբերմամբ, ես ամենից գլխաւոր և էա-  
կան եմ համարում այն ամենից, ինչ որ  
ես գործել եմ իմ կեանքում։

---

I.

Մարդկութիւնը անընդհատ առաջ է  
շարժվում առաջադիմութեան մեծ ձա-  
նափարհով։ Այդ շարժման մէջ երբեմն պա-  
տահում են տեսակ տեսակ յապազումներ,  
խոշնոգոտներ և շեղումներ զէպի մի կողմ;  
բայց յետոյ նա կրկին ընդունում է նախ-  
կին ուղղութիւնը և ձգտումը զէպի ա-  
ռաջագիմութիւն, շարունակվում է աւելի  
մեծ ոյժով և եռանգով։

Սակայն շատերը հաստատում են, որ  
այդ ձգտումը միշտ զրական քնաւորու-  
թիւն չունի. օրինակ, մարդկային հասկա-  
ցողութիւններից ամենահինը և ամենա-  
խօրը՝ կրօնականը ձգտումէ իբրև թէ ա-  
ւելի շուտ զէպի անկումը, զրեթէ զէպի  
կատարեալ ոչնչացումը անգամ։ Այդպիսի  
հաստատութիւնը ուղեղ չէ։

Գլխաւոր և սնփոփոխելի էութիւնը,  
առհասարակ կրօնի խորհուրդը, — դա  
յայտնի «պահպանող սկզբունքն է», «բա-  
րոյական պատասխանատութիւն» զգաց-  
մունքը և միայն այդ վերջինը առաւել ու  
առաւել ածում է և ամրապնդվում մարդ-  
կութեան մէջ, այնպէս որ արդէն այժմ  
շատ աւելի գերազանցում է այն նեղ, չը-  
զարդացած զգայշմունքին, որով վաղեմի-  
ժամանակներում բաւականանում էին մեր  
նախնիք: Ապա նոյն իսկ կրօնի հիմքը,  
գաղափարը «Յաւիտենական»-ի և «Ան-  
վախճան»-ի մասին, անկատկած, մեր օրե-  
րում բարձրագջն ասախճանի զարգացման  
է հասել նոյնպէս. նա արդէն ոչ միայն  
կշըր հաւատի առարկայ է այժմ, այլ գի-  
տակցական համոզմունքի, որ պահպանում  
են մարդկային ազգի մեծամեծ մասնակիւրը:  
Ուրեմն մենք աեսնում ենք, որ մարդ-  
կութեան կրօնական հասկացողութիւնը  
փոխում է և եթ իւր ձեերը և պատկե-  
րացումները, իսկ հիմքը և էութիւնը ան-  
փոփոխելի են մնում: Նոյնը կարելի է ա-  
սել և ուրիշ մարդկային բազմաթիւ հաս-  
կացողութիւնների և զգացմունքների վրա-

բերմամբ (օր. գահին հաւատարիմ լի-  
նելու զգացմունք, հայրենասիրութեան և  
այլն). մարդկային մտածողութիւնը ձգում  
է հնացած և նեղ շաւիդները և եթ, բայց  
ոչ երբէք նոյն ինքն ուղղութիւնը, որ դէ-  
պի առաջադիմութիւն է տանում:

Մարդկութեան ձգտումը դէպի առաջա-  
դիմութիւնը արտայատվում է, ի միջի այ-  
լոյց նրա (առաջադիմութեան) վերսրե-  
րութեան մէջ դէպի ամսւանութիւնը կամ  
կապը այր մարդի և կնոջ մէջ:

Մարդկային ազգի ամենահին պատմու-  
թիւնը, նրա կենցազավարութիւնը և բա-  
րիքը, տարտբագրաբար, մեղ յայտնի չեն.  
սակայն հիմք կայ կործելու, որ ընտանե-  
կան սկզբունքի ամուր սահմանը կատա-  
րուել է կին-մօր շնորհիւ. նորա շնորհով  
երեխանելը օջաղ ցեղական և ժառանգու-  
կան իրաւունքներ են սատցել. ուրեմն նա  
ընտանելքի և հոսարակութեան սահցող  
է եղել:

Այնպիսի յեղափոխութեան մասին, որ  
աղամարդին բնաւանիքի և հասարակու-  
թեան գլուխ, կնոջ երեխաների և կայքի  
իշխող գարձրած լինէր, մենք նոյնպէս ո-

չինչ հաւաստի բան չգիտենք, և ենթագրել կարող ենք միայն, որ նորան դարձրել է (գլուխ) որ և իցէ մի մեծ կրօնական վերանորոգութիւն:

Ապա այդ՝ ամբողջ հազարաւոր տարիներ պահպանուած կարգի բարեփոխութիւնը համեմատաբար նոր է սկսուել, — որ զրութեամբ և իրաւունքներով կնոջը տղամարդուն հաւասար է դարձնում, և ձգոումը դէպի միակնութիւնը (այսինքն մէջ այր մարդի կապը մէջ կնոջ հետ) դանդաղ բայց ուղեղ առաջ է գնում, թէպէտե տակաւին չէ կարելի ասել, որ երկրագնդի որ և է անկիւնում այդ բանը բոլորովին իրագործուած, նպատակին մօալիսէր:

Անկասկած, վերցիշեալ վերանորոգող շարժման առաջին գարկը կինն է տուել սերունդից սերունդ ժուժկալութեան և այր ամօւսնին հաւատարիմ լինելու սկըզբունքների մէջ կրթուելով, նա այդ եղանակ նշանաւոր կերպով այր մարդից առաջ է անցել և նրան բարցյական կողմից, իբր օրինակ է դարձել: Մանօթանալով բնական գիտութեան վերջին եղբակա-

ցութիւնների հետ ժառանգականութեան օրէնքների վերաբերմամբ, որոնք ցեղի վերայ պարտք են զնում սեռական յարաբերութիւնների մէջ բարցյական ժուժկալութիւն և չափաւորութիւն պահպանելու, կանայք սկսեցին եռանգուն կերպով աշխատել բարցյականութեան նոյն պահանջները սահմանելու և տղամարդկանց համար, որպէս և կանանց: Եյդ Ճանապարհի վերայ իբրև առաջին կարապետուհիներ հանդէս եկան անզլուսաքս համարձակ կանայք, նրանց օրինակին անյապաղ հետեւեցին և մեր հիւսիսի կանայքը:

Սակայն հասարակութեան մի մասի մէջ մինչեւ այժմ պահպանվում է այն համոզմունքը, որ սեռական հազորդակցութիւնը արդէն պատանի հասակում պէտք է ըսկուի, և որ շատ ֆիզիքական և հոգեկան խանգարումների արմատը կայանում է հենց այդ հիմնական ֆիզիքական պահանջը չպահպանելու մէջ<sup>12</sup>

<sup>12</sup> Մի բանի տարի առաջ Անզլիայում մի գիրք լոյս տեսաւ (նրա ննդինակը բժիշկ դուրս եկաւ, և նա շուտով թարգմանուեց շատ երոպական լե-

Այդ առիթով ես զիմել եմ հարցերով՝  
զանազան ազգութիւնների ուսումնական  
բնախյալներին և բժիշկներին, միակողմա-  
նիութեան մէջ չընկնելու համար և ահա  
իմ հարցուփորձերի հետևանքը. սկսենք  
կենդանական աշխարհից: Վայրենի կենդա-  
նիները սեռական միաւորութեան պահանջ  
են զգում կատարեալ ֆիզիքական հասու-  
նութեան հասնելուց յետոյ միայն. իմէ  
եթէ նման ձգում է առաջանում ոչ  
բոլորովին հասուն և թոյլ կենդանիների  
(անհամաների – օսօծեյ) մօտ, այսպիսինե-  
րը նրան բաւականութիւն տալու համա-  
րաւորութիւնից զուրկ են մնում. աւելի  
ուժեղ և հասակաւոր հակառակորդները  
թոյլ չեն տալ: Ասկ անսյին կենդանիների

գուներով), որ առաջարկում էր սիրոյ ազատութիւնը  
նախագործութեան յալտնի կանոններ պահպանելով,  
—որպէս հասարակութեան քրկութիւն բազմաթիւ  
հիւանդոտ չարիքներից: Իսկ սեռական միաւորու-  
թիւնը, հեղինակի կարծիքով, երկու սեռերի համար  
ևս պէտք է 14—15 տարեկան հասակից սկսուի:  
Այդ շարադրութեան առիթով մնանում հիւսիսում  
լոյս տեսան իրեք պատասխան ամրող շարք գրի-  
քեր, բրոշիւրներ և լրագրական յօդուածներ:

վերաբերմամբ, որոնց մարդիկ շահուելու  
պատճառով աշխատում են երբեմն, որ-  
քան կարելի է, վաղ բերել սեռական յա-  
րաբերութեան, յայտնի է, որ նրանցից  
հասուն օրինակները միայն ուժեղ և լաւ  
սերունդ են տալիս: Օրինակ, նորվեգիա-  
յում կովերի և ձիերի ամբողջ սերունդ-  
ներ փոքրացել և անհետացել են այն պատ-  
ճառով, որ մերձաւորութիւնը շատ վաղ  
էր սկսվում:

Ինչ մարդկանց է վերաբերում, մենք  
տեսնում ենք, որ, եթէ սաոր ցեղերի մօտ,  
առանձին կլիմայական և ուրիշ պայման-  
ների պատճառով, սեռական յարաբերու-  
թիւնը խիստ վաղ է սկսվում, դորա փո-  
խարէն և վաղ էլ ընդհատվում է՝ ան-  
հատների վաղաժամ ֆիզիքականապէս թա-  
ռամելու պատճառով: Քաղաքակրթուած  
ազգերը նցնապէս, կարծեմ, բաւական ժա-  
մանակ և հիմունքներ են ունեցել հա-  
մոզուելու համար, որպէս վաղաժամ սե-  
ռական յարաբերութեան վեասի մէջ, մա-  
նաւանդ կանանց համար, նցնապէս և այն  
բանի մէջ, որ առողջ կատարելապէս զար-  
գացած ծնողների երեխաները աւելի տո-

կուն և ընդունակ են գյուղեան կոռի համար: Ուրեմն նոյն իսկ բնութեան պահանջները և կիսաական պայմանները մատնացոյց են անում ժուժկալութեան անհրաժեշտութեան վերայ մինչև կտաարեալ ֆիզիքական հասունութեան ժամանակը, բայց մարդիկ սովորել են այդ բոլորին հակառակ գնալ:

Ահա, օրինակ, ինչ են ասում «իրայ ապագա»-նեան մի քանի ախցեանները: Հնումը ամուսնութեան համար բնական հասակ էր 15 — 16 տարեկան ժամանակը, իսկ մեր օրերում բարդ ձեւ ստացած կենսական պահանջները նշանաւոր կերպով այդ ժամանակամիջոցը ետ են քշել, իսկ սեռական ձգտումը նախկին հասակումն է զարթնում, ուստի և պէտք չէ բոնաբարել բնութիւնը, այլ ընդհակառակն, վայր ձգել նախապաշարմունքների շղթաները և ազատուն նուիրուել ֆիզիքական հակման: Սյդ կողմից կանանց նոյն իրաւունքները պէտք է տրուին, ինչ որ աղամարդկանց:

Նմանօրինակ դատողութիւններ լսելով կարելի է միայն զարմանալ այդ խօսքերը

արտասանող անձանց անձանօթութեան վերայ (կամ զիտմամբ անզիտանում են) վաղուց հաստատուած զիտական դրութիւնների հետ: Նրանցից առաջինը (զիտական զրութիւն) «բարձրագոյն օրգանիզմներին կատարեալ ֆիզիքական հասունութեան հասնելու համար աւելի երկարատև միջոց է հարկաւոր քան ստորներին». Երկրորդ՝ «բարձրագոյն (խոշոր) օրգանիզմները չափաւոր աճում սեղունդ են առաջցնում աւելի մեծ ժամանակամիջոցից յետոյ, իսկ ստորները, ընդհակառակն, յայտնի են իւրեանց անշափ ծննդաբերութեամբ»: Ուրեմն անհատի սեռական գործողութիւնները և նրա ընդհանուր զարգացման աստիճանը գտնվում են հակագարձ կախման մէջ և նշանակում է «աիրոյ ազատութեան» պաշտպանները աչքի առաջից բաց են թողել որ եթէ ամուսնութեան մէջ մտնելու միջոցը մեր օրերում ետ է քաշուել կենսական պայմանների բարդուելու պատճառով, այնպիսի պայմանների, որոնք մարդկային ընդունակութիւնների աւելի մեծ և բազմակողմանի զարգացում են պահանջում, ինըն

ըստ ինքեան պիտի ես քաշուէլ և մարդի  
սեռական հասունութեան սահմանը: Ոյս-  
պէս մեզանում հիւսիսում՝ այր մարդը չէ  
հասնում կատարեալ ֆիզիքական և մը-  
տաւոր զարգացման 25 տարեկան հասո-  
կից առաջ, իսկ կինը 20 տարեկանից: Ոյս  
պատճառով վաղաժամ սեռական ձգու-  
մը պէտք է արուեստական կերպով առա-  
ջացրած համարել ոչ թէ բնական պա-  
հանջ և նրան կարելի է և՛ պէտք է յաղ-  
թել:

Ինչ վերաբերում է մեր գերմանական  
ցեղն, գեռ Տակիտոսը գրում էր, որ զալ-  
ղեացիների երկարատև երիտասարդութիւ-  
նը գլխաւորապէս կախուած է նրանց ուշ  
պսակուելուց: Գովել մի ժողովուրդ որ  
նա ունի երկար ժամանակ աւող երիտա-  
սարդութիւն, մի և նոյն է թէ այդ ժողո-  
վը կենսական ոյժերի ամենալաւ ապա-  
ցոյց բերել իսկ ասել որ վերջին հանգա-  
մանքը կախուած է աւելի ուշ ամուսնա-  
նալուց, նշանակում է յեղի կատարելա-  
գործութեան օրէնքները գիտենալ:

Հին ստքսերի՝ անզղիացիների նախնեաց  
մօտ որպէս կանոն էր ընդունուած, որ ե-

րիտասարդ մարդիկ մինչեւ քսանութինգ  
տարեկան հասակը ողջախոհութիւն պահ-  
պանէին, «որպէս զի, — որպէս նրանք էին  
ասում, — ամրանային ու աւելանային նը-  
րանց մկանունքների ոյժերը և հասակը», իսկ  
զլիաւոր նպատակը հասկանալի է, որ ու-  
ժեղ և ամրակազմ յետնորդներ ունե-  
նալն էր:

Ես չեմ մտնում այն պատճառների քըն-  
նութեան մէջ, որոնք վերցիշեալ առողջ  
գաղափարների կորուսը ստեղծեցին, կո-  
սեմ միայն, որ ներկայ ժամանակում, բա-  
րերազբար, մարդկանց մեծամասնութիւ-  
նը սկսել է հասկանալ ի՞նչ է իսկապէս  
նա արհամարհել և որպիսի հետեւանքներ  
տուեց այդ թեթեամբ արհամարհանքը:  
Անզղիական և ամերիկական մարմնամարզ-  
ները և սպօրտամիջները մասամբ փորձ են  
անում արգէն վերականգնելու հնարաւոր  
կատարեալ ֆիզիքական զարգացման կա-  
րեռութեան և անհրաժեշտութեան մա-  
սին կորցրած հասկացողութիւնը և պէտք է  
յուսուլ որ համատարած մարմնակրթան-  
քի և մարմնամարզութեան հետ փոքր տո-  
փոքր ոյժ կստանայ և ժուժկալութեան օրէն-

քըս Սեռական ժուժկալութիւնը բնաւ չէ թուլացնում, որպէս այդ յաճախ ասում են, մարդու կազմը և իրենով ոչինչ հիւնդութիւններ չէ առաջացնում, եթէ միայն սրա հետ միասին մարդիկ առ հասարակ խելացի ու կանոնաւոր կեանք են վարում: «Գունատ կուսական անկարութիւնը», օրինակ, մինչև այժմ սրանից փրկութիւն էին տեսնում միայն մարդի գնալու մէջ, Վիրխովի և ուրիշների վերջին հետաղութութիւնների հիման վերայ, ունի բոլորովին ուրիշ պատճառներ, — այդ հիւնդութիւնը հաւասարապէս կարող են ունենալ և՛ ամուսնացած և՛ հասարակաց կանայք, անգամ ութ տարեկան աղջիկները: Մէկ այդպիսի գեղեցիկ բացադրութիւն խորտակող հարուած հասցրեց բազմաթիւ վատառողջ նախապաշարմունքներին և զատարակ զրականական շաղփականներին: Տղամարդկանց մասին էլերկար ժամանակ ասում էին, որ սեռական ժուժկալութիւնը հոգեկան խանգարումն է առաջացնում, բայց աչափ գիտութիւնը առանձին վիճակագրական խաղեր մտցրեց. «Հոգեկան-հիւնդներ սեռական

ժուժկալութիւնից» և ինչ այդ գծերը գրեթէ դատարկ են: Այսպիսի ապացոյցի առաջ շուտով, հաւանակօրէն, կընդհատուն և վերջին հակածառութիւնները այդ հարցի մասին:

Ամենեքեան կհամաձայնեն, որ ոչ ոք իսկապէս գեռ չէ խելազարուել բացառապէս սեռական ժուժկալութեան պատճառով. իսկ աւելի շուտ մարդիկ խելազարվում են նրանից, որ այդ բանում իրանց երեակայութեան խիստ ազատութիւն են տալիս:

Նորվեգիայի բժշկական ֆակուլտետը նոյն առիթով հետեւեալ եղրակացութիւնն է անում.

«Այն համազմունքը, իբր բարոյական կեանքը և սեռական ժուժկալութիւնը առողջութեան վանդ են սպառնում, մենք, մեր փորձառութեան վերայ հիմուած, սուտ ենք ձանաշում: Ֆիզիքական տկարութեան կամ խանգարման ոչ մի օրինակ մեզ յայտնի չէ, որոնց պատճառ պէտք լինէր համարել մաքուր բարոյական կեանքը»:

Այսպէս ուրեմն, աչափ ինչ են ասում այն մարդիկ, որոնք հիմք ունին իրանց

փորձառութեան վերայ յենուելու, ունին  
աշազին բժշկական պրակտիկա, իրանց  
կարհիքներով և գիտողութիւններով փո-  
խանակուելու լայն հնարաւորութիւն ու-  
նին գիտութեան կողմից իրանց եղբայրա-  
կիցներից շատերի հետ: Հիւսիսի երիտա-  
սարդ բժիշկների ամսագրում, որոնք, որ-  
չափ ինձ յայտնի է, իրանց ուսումնականու-  
թեամբ և բարեխզութեամբ բնաւ տեղի չն  
տալիս ուրիշ երկրների բժիշկներին, հաս-  
տարվում է նոյնը: Ուրեմն մարդկութեան  
ընդհանուր առաջադիմութիւնը նկատվում  
է, ի միջի այլոց, և այն հանգամանքի մէջ,  
որ բարոյական ժուժկալութիւնը օրէցօր  
զարգանում է և «մէկ տղամարդի մէկ կնոջ  
հետ» ունեցած կապի գաղափարը աւելի  
հաստատվում է: Մարդկանց գիտակցու-  
թիւնը և խիղճը այդ կողմից այնպիսի խո-  
շոր քայլեր են արել գէպի առաջ, որ այժմ  
անհնարին է բոլորովին վերադառնալ ան-  
ցեալի նեղ տգէտ հասկացողութիւններին:  
Ես ասացի «խիղճը», որովհետեւ նա էլ  
ենթակայ է առաջադիմական օրէնքին. ներ-  
կայացնելով իրենից մարդկութեան ձեռ-  
քով մշակուած բարոյական գաղափարնե-

րի և հայեացքների մի տեսակ գումար,  
նա ցոլացնում է իւր մէջ հռչակաւոր  
«ընդհանուր» (հասարակական) կարծիքը»  
և որպէս բարոյական զգացմունք, ներկայա-  
նում է իբրև մարդկանց յարատե ժառան-  
գական յատկութիւն: Առանձին անհատը,  
հարկաւ, կարող է ծախսել, փչացնել այդ  
թանգարին ժառանգութիւնը, բայց ցեղի  
և մարդկութեան մէջ նա միայն կարող է  
ածել և աւելանալ: Օրինակի համար, հե-  
տեւնք մի փոքր պատմական կեանքի ըն-  
թացքին, թէկուղ հէնց մեր երկրի: Գա-  
րալդ Գանգրահերի ժամանակները իշխան-  
ները կարող էին ունենալ հաւասար ի-  
րաւունքով մի քանի կանայք, տպա, երբ  
արդէն երկրի նմանօրինակ գրութեան վեր-  
ջը եկաւ, մենք, այնու ամենայնիւ, ալքա-  
յական հարճի որդուն օրինական թագու-  
հու որդու հետ գահի թեկնածութեան հա-  
մար հաւասար էինք ձանաշում իրաւունք-  
ներով: Ժամանակի ընթացքում դժյն օրի-  
նակ երեցիթը այլ ես անհնարին գարձաւ,  
բայց տակաւին XVI ու XVII դարերում  
մենք հասարակ գտամ մարդիկ և քահա-  
նաներ ենք տեսնում, որոնք չեն գժուա-

բանում ժամանակաւոր կերպով իրանց դուստրները արքաներին կամ մեծամեծներին յանձնելու։ Այդ տեսակ բարքերը փոքր առ փոքր աւանդութիւնների աշխարհը անցան. իսկ որպէս զի կարողանանք հասկանալ որչափ երկար ժամանակ իսկապէս պահպանվեցին հին կարգերը և բարքերը, բաւական է յիշել միայն մի քանի խրախճանների անկարգութիւններ, մասնաւոնդ հռչակաւոր ապօւխտային քէֆերը և խնջոյքները։ Անցեալ դարի վերջը և ներկայ դարի սկիզբը նշնդիմ շատ բաներով աշքի էին ընկնում, որոնցից կը վրդովուէր ժամանակակից հասարակական խիղճը։ Ուրեմն, բարոյական առաջադիմութիւնը ակներե է։

Ինձ գուցէ կհակածառեն, որ և մեր ժամանակիցները գաղանի կերպով մեղանչում են ոչ պակաս արատներով, բայց դա սխալ է, առաջին՝ առանձին դէպքերը գեռ ոչինչ չեն ապացուցանում, երկրորդ՝ այն հանգամանքը, որ այդ տեսակ արատներ և մոլութիւններ յաճախ թագնվում են զաղանիքի ծածկոցի տակ, վկայում է առաջադիմող «հասարակական կարծիքի» յաղթանակի համար։

ՀԱՅ - ԶԵՐ

Առաջադիմական պրօցեսոր հէնց նրա մէջ է կայանում, որ փորձը շարկադրում է շատ ու շատ մարդկանց կասկածել մինչև այժմ գոյութիւն ունեցող հասկացողութիւնների կատարելութեան և հասանառութեան մէջ. սրա հետ հասարակութեան մի քանի անգամները օրինակ են տալիս, ուրիշները յօժարութեամբ հետեւում են նրանց, շատերը սահիպուած են լինում հետեւու, իսկ վերջապէս ոմանք չեն կարողանում և չեն ցանկանում այդ։ Որովհետեւ ուղղութիւն ստեղծում են ոչ թէ վերջինները, այլ առաջինները. ուստի նոյն իսկ առաջադիմութիւնը արտայայտվում է վերջինների թուի պակսելով. սակայն բարոյական պահանջները երբէք չեն թուանալ նրանց հաճայքի համեմատ։

Այդ կողմից առաջինները, որպէս մենք արգէն տեսանք, կանայք էին. սակայն մարդկութեան բարոյական առաջադիմութիւնը շատ զանգաղ է ընթանում. հասարակութեան բազմութիւ անգամներ տակաւին բարոյական գիտակցութեան այն բարձրութեան չեն հասել, որ պահանջում է ժուժկալութեան և «միախնութեան» օ-



բէնքը,—դեռ նրանց մէջ կան կանայք, ո-  
րոնք կարիքից ստիպուած ծախում են  
իրանց, կան և թեթեամտութիւնից ընկ-  
նողներ: Բայց մի կին, որ մեծացել է բարի  
ժառանգականութեան, լաւ ընտանիքի,  
կրթութեան, կրօնի, լուսաւորութեան, վեր-  
ջապէս կարողութեան կամ աշխատանքի  
պայմանների մէջ, կարող է այդպիսի կինը  
սիրած մարդու վերաբերմամբ յօժարակամ  
դաւաճանել իւր բարոյական պարտաւո-  
րութեան: Այդ առիթով ես աւելորդ չեմ  
համարում յիշել մի գրքի մասին «Քրիս-  
տիանիայի Բօհեմա» հանս Եգերի, որ ես  
ունէի մի ժամանակ: Ես այդ գիրքը մինչեւ  
վերջ չեի կարգալ եթէ նրա վախճանը  
(развязка) իմանալու ցանկութիւն չու-  
նենացի՝ զրիք մէջ նկարագրուած օրինա-  
ւոր ընտանիքներից ծագում ունեցող ե-  
րեք կանայք գայթակղեցուցիչ տղամարդ-  
կանց դէմ կընկնե՞ն արդեգք թէ կդիմա-  
նան: Դուրս եկաւ, որ նրանց պարտաւո-  
րութեան ձանապարհից անկարելք էր հա-  
նել: Այսպէս Եգերի գրքի բարոյականը բո-  
վանգակում է սկզբում իմ գրած հարցին  
պատասխանը:

Բայց լինում են և բայցառութիւններ,  
և չնայած զրան, ես կարծում եմ, ոչ ոք  
(բացի միայն satyriasis-ով բռնուածնելից)  
թոյլ չի տալ իրան կասկածելու այն բանի  
մէջ, որ առաջագիւմով մարդկութիւնը ոչ  
մի գէպքում չի հրաժարուի այն բարոյա-  
կան և Փիզիքական կազմուրիչ հոսանքից,  
որ կինը մացրեց մարդկացին ազդի մէջ  
ժուժկալութեան և միամարդութեան օ-  
բնէքին հաւատարիմ մնալով:

## ՀՀ.

Մինչեւ այժմ գեռ գոյութիւն ունին  
հասարակութիւններ, անգամ ամբողջ ազ-  
գեր, որոնք «ժուժկալութեան» և «մէկին  
հաւատարիմ լինելու» պահանջները միայն  
կանանց համար են օրէնք գարձրել իսկ  
այլ մարդիկ կողմանակից են բազմակիու-  
թեան: Բացարձակ բազմակնութեան լա-  
ւագոյն ներկայացուցիչների՝ մահմեղական-  
ների մէջ արդէն հիմնուել է մի տեսակ  
ազանդ, որ պահանջում է ամենախիստ  
միակնութիւն և այս վերջինը, որպէս ես  
լսել եմ մի ուպսալացի պրօֆեսորից, որ

Երկար ժամանակ մահմել զականների մէջ է  
ապրել առաւել մեծ իրաւունքներ է նուա-  
ճում և արագ տարածվում: Բայց այդ  
այսպէս էլ պէտք է լինի: Առ հասարակ  
բազմակինութիւնը միայն ժողովրդի ֆիզի-  
քական և բարոյական թուլութիւնն է ա-  
ռաջ բերում: Իսկ վերաբերուելով կնոջը,  
որպէս առուատուրի առարկայի, հասարա-  
կութիւնը վաղ ապականում է երիտասար-  
դութեան և մարմինը և՛ հոգին, իսկ հա-  
րեմային սիստեմայի պատճառով ծոյլ վա-  
վաշոա, խաւարի մէջ ընկզմած այդ հա-  
սարակութեան խորթ է մնում ձգուումը  
դէպի որ և է բարոյական կատարելագոր-  
ծութիւն. բայց այդ հետեւում է այն հան-  
գամանքից, որ հասարակութիւնը զուրկ է  
կին-ընկերուհու արթուն և խրախուսող  
ազգեցութիւնից: Ինչ ասել կուզէ, որչափ  
այդպիսի հասարակութիւնը յետ է մնում  
մերից մարդկութեան ընդհանուր առաջա-  
դիմութեան ասպարիզում:

Ամերիկացիների մէջ բազմակինութիւնը  
տակաւին նոյնապէս բազմաթիւ ներկայա-  
ցուցիչներ ունի ազանդաւոր մարմանների  
մէջ, մանաւանդ նա ծաղկում էր հարա-

ւային նահանգներում, երբ այնտեղ գոյու-  
թիւն ուներ ստրկութիւնը: Ճորտատիլու-  
թիւնը և բազմակինութիւնը միշտ ձեռք  
ձեռքի առաջ են ընթանում, այնպէս որ  
գերիների ազտառութեան համար մղուած  
բացարձակ կռիւը, մի և նոյն ժամանակ  
զաղանի կռիւ էր բազմակինութիւնը ոչն-  
շացնելու համար, որ (բազմակինութիւնը)  
առ հասարակ այդչափ անբարոյականաց-  
նող ազգեցութիւն ունի հասարակութեան  
վերայ: Այն ժամանակի մարդիկ կարծես  
թէ բոլորովին մոռացել էին, որ հա-  
սարակութեան բարձրագոյն ոյժը և զօ-  
րութիւնը կայանում է նրա բարոյակա-  
նութեան և սակայն փոքր առ փոքր ա-  
ւելի ուրախալի յարաբելութիւն ծագեց  
դէպի այդ հարցը, որ, մի ամբողջ գարի  
ընթացքում, վերջապէս առաջ եկաւ: Բայց  
ինչ էր սկզբում: Ազատութեան առաջին  
ախոյեանները՝ կանաչք (նրանք առաջինն  
էին) և աղամարդիկ չէին կարող հարկա-  
դրել անգամ լսելու իրանց: Բայց երբ գոր-  
ծը փոքր ինչ առաջ գնացյալ իրանց վերայ  
ծաղը ու ծանակ, հայդիշանք թափեցին,  
ապա մեղադրեցին հասարակութեան և

պետութեան հիմքերը փորելու ձգտման, մարդկանց ազատութեան և կայքին ձեռնամուխ լինելու մջ։ Իւրաքանչիւր ոք, որ իշխանութիւն ունէր, հարուստ էր և աղոնուատոհմ, հոգեօրականութիւնը, ծերակցյալ, վեհաժողովը, մամուլը, բոլորը նըրանց դէմ ապստամբեցին և մեծահոգի մարտնչողներից շատերը իրանց գործի համար զոհ ընկան։ Ստրկութիւնը ոչնչացնելու համար հասարակութեանը հրաւէր կարգացող հռետորների վերայ աարձանակներ էին պարագում հրապարակական ժողովներում<sup>1</sup>։ Վերջապէս, կրքերը անսանձ կերպով վառուեցին. երկրագործները, արհեստաորները, վաճառականները, գիտնականները ձգեցին իրանց պարապմունքները, գէնք վերցրեցին, և հարաւայինների ու հիւսիսայինների մէջ սարսափելի եղ-

<sup>1</sup> Յայտնի Պարկերը նման դէպքում ասաց «Սպասիր, առաջ թոյլ տոնը ինծ խօսք ասել», ապա անուանեց փողոցը, որով նա մտադիր էր տուն վերադառնալ։ Միւս հոետորը, որի վերայ նոյնպէս ատրձանակ պարպեցին, բայց անաջող, ասաց «Դիպցնել իսկ չ'ն կարողանում!» և հանդիստ շարունակեց իւր ձառը։

բայրասպան պատերազմ բռնկեց։ Ստրկատիրական նաշխանքների կողմում կային միքանի զինուորական առաւելութիւններ, ուստի հիւսիսայինները սկզբում պարտութիւններ էին կրում, բայց այդ նրանց ըստ վհատեցրեց, ընդհակառակն, նրանք դեռաւելի մեծ եռանդով միացան ազատութեան զրօշակի շուրջը և, վերջապէս, յաղթող հանդիսացան։

Յաղթողները որպիսի<sup>օ</sup> պայմաններ առաջարկեցին։ Ազատել բոլոր գերիներին և ամենքին, առանց բացառութեան, քաղաքացիութեան իրաւունքներ շնորհել։ Յաղթողները իրանց համար ոչ մի թիզ հոդ պատերազմական տուգանքի ոչ մի կոպէկ չպահանջեցին, — քաղաքացիների ազատութիւնը և իրաւունքների հաւասարութիւնը, ահա ինչ էր պատերազմի առիթը և նպատակը։ Տիեզերական պատմութեան մէջ չ' հանդիսանում մի պատերազմ, որ աւելի մաքուր զրգումներից ծագած լինէր և վերջանար, բացառապէս, բարժյական սկզբունքի յաղթանակով։

Իւր ժամանակին ես բազդ ունեցայ հանգիպելու մի քանիսին այն խիզախ մարդ-

կանցից, որոնք նպաստեցին հասարակական խղճի վերցիշեալ արթնութեան, օրինակ, Եղիսաբէթ Ստենտոնին և Թօբերտ Խոգերտոյացին:

Ի միջի այլոց, ես խօսակցութիւն եմ ունեցել նրանց հետ բազմակնութեան մասին և այն զայրոյթի մասին զաղափար կազմելու համար, որով նրանք վերաբերվում են գէպի բազմակնութիւնը. այստեղ կրերեմ մի քանի խօսք Խոգերսոլլայի կրակոտ Ճառից. «Աշխարհումն ոչ մի լեզու բնաւ չի կարող արտայայտել որպիսի վընաս է պատճառում հասարակութեան բազմակնութիւնը. նա կնոջը խորամննկութեան և ցմի աւար է գարձնում, իսկ տղամարդին գիշակեր գաղանի փոխարկում, որ պատրաստ է վլորուել արատի և յանցանքների բոլոր անդունդները, միայն նորան՝ կոջը տիրելու համար!...»

Ես սաստիկ ատում եմ և արհամարհում ամեն տեսակ հասարակական վարդապետութիւն, որ հիմնուած չէ մաքուր, սրբազան ընտանեկան սկզբունքի վերայ. ամբողջ քաղաքակրթութիւնը, ամբողջ առաջադիմութիւնը հիմնվում է նրա վե-

րայ, բոլոր առաքինութիւնները կենտրոնանում են ընտանեկան օջաղի շուրջը. ուր մէկ այլ հարստ սէլուն-ճ է մէկ կը-նոց: Աշխարհումն բովանդակութեամբ ամենից արտայայտիչ և գորեղ ամենից թանգ խօսքերը սրանք են՝ իմ նշանածը, իմ կինը, իմ հայրը, իմ մայրը, իմ երեխան! Այդ խօսքերից զրկուած աշխարհը մի և նոյն է թէ որջ է, իսկ մարդիկ վայրենի կենդանիներ!»:

Վերջապէս, այժմ մենք հասանք այն տեղ որի համար ես զլխաւորապէս և վրձուելի հանդէս գտլ իմ ատենախօսութեամբ. բազմակնութիւնը, որին երիտասարդութեան ժամանակ մեզանից մեծ մտաք անձնատուր է լինում, միջթէ ոչ մի վեաս չէ հասցնում կամ նրա հետքերը արգեօք ջնջվում են բնաւին մեր հետագայ ամուսնութեամբ: Կդանուի արգեօք մէկը այնչափ միամիտ, որ զբան հաւատայ: Ո՛չ բազմակնութիւնը — սեպհական անձնաւորութեան այդ անմիտ ծախսը մանր բաների մէջ մեր ցմիջերի աղքիւրը փոխում է ամենամեծ թուլութեան, խեղաթիւրում է մեր մէջ սիրոյ բարձր զգացմունքը և ձրգ-

և այդ կատարվում է միայն այն պատճառով, որ երիտասարդի երևակայութիւնը թունաւորուած է փատած խօսակցութիւններով և վատ օրինակներով։ Եւ աւաղ, եթէ նա ժամանակին կանգ չի առնիլ, թոյլ կտայ իրան այդ անհաստատ, մոլար ձանապարհի վերայ մնալու, — շուտով նրա հոգին կկոշտանայ, գեղեցիկ զգացմունքը յաւիտեան կքնի նրա մէջ և նոյն ինքն բարոյական զատողութիւնը այն աստիճան կարող է խեղաթիւրուել որ նա կիրյնի ավնիւը ստորից զանազանելու ընդունակութիւնը անգամ։ Ո՞րքան մարդիկ կենաւական ճանութեան մէջ լուսաւում է լարը լարի ետեից թէ՛ տանիը, թէ՛ դպրոցում, թէ՛ հասարակութեան մէջ իւրաքանչիւր եղելութիւնով, իւրաքանչիւր խօսքով, իւրաքանչիւր կարգացած զրբով։ Եւ ահա հէնց այդ ժամանակ ծնողներից ու զաստիարակներից զազտուկ և սեպհական խղճի գէմ կատարվում է այն, որ այդշափ սաստիկ կերպով գեղեցիկ զգացմունքին հակասակ է գնում, որ ստիպում է կարմրել ամօթից,

տումը գէպի գեղեցկութիւնը, որոնք յատուկ են մարդու հոգուն։

Բայց, եթէ սկսենք հէնց վերջինից, այսինքն, գէպի գեղեցկութիւնը ձգտելուց, — միթէ նմանօրինակ խեղաթիւրման կարելի է նշանակութիւն չուալ։ Գեղեցիկ ըզգացմունքը զօրեղ է մանաւանդ կեանքի այն նշանաւոր շրջանում, երբ, այսպէս ասած, զրվում են նրա ամբողջ կենաւական գործունէութեան հիմքերը՝ երիտասարդական փափուկ հասակում։ Սյդ ժամանակ հոգին այնպէս ուժեղ կերպով ընդունում է բոլոր ապաւորութիւնները և սրանք ել կամքի վերայ են ներգուծում, որ մարդաիրը թէ երաժշաական գործիքի է նմանվում, որ լարվում է լարը լարի ետեից թէ՛ տանիը, թէ՛ դպրոցում, թէ՛ հասարակութեան մէջ իւրաքանչիւր եղելութիւնով, իւրաքանչիւր խօսքով, իւրաքանչիւր կարգացած զրբով։ Եւ ահա հէնց այդ ժամանակ ծնողներից ու զաստիարակներից զազտուկ և սեպհական խղճի գէմ կատարվում է այն, որ այդշափ սաստիկ կերպով գեղեցիկ զգացմունքին հակասակ է գնում, որ ստիպում է կարմրել ամօթից,

նուրբ ճաշակ են ցըց տալիս և մեծ, գեղարուեստական գրուածներ են ստեղծում: Բայց բաւական փանգաւոր է բացառութիւններով և «ամենառժեղ», ընտիր բնաւորութիւնների» օրինակով զրաւուել: Իսկապէս ոչ ոք էլ չփառէ, որչափ կշահուելու վերոյիշեալ անձինքների և՝ ճաշակը և գեղարուեստական զարդացումը, ևթէ նրանց հոգեկան կեանքի սկզբնական ներդաշնակութիւնը զեռ երիտասարդութեան ժամանակ չփառակուեր վերոյիշեալ աններդաշնակութեամբ (диссонанс): Այսպէս թէ այնպէս անմաքուր գործերը և խորհուրդները միշտ թողնում են իրանց հետքը, և պէտք է բարոյական ոգու ահազին ոյժ այդ հետքը ջնջելու և կրկին կտարեալ հոգեկան ներդաշնակութիւն վերականգնելու համար:

«Ամենամաքուր—ամենազօրեղ»,—ի միջեայլոց ասում է Զոլան և այդ գեղեցիկ ասցուածը, աւելի քան կարելի է, յարմարում է այսաեղ:

Վերցնենք ապա սիրոյ զգացմունքը: Ոչ ոք այն՝ սիրոյ զգացմունքը այնպիսի սրտաշարժ, գեղեցիկ ձևով չի արտապայտում,

որպէս մաքուր, չփչացած, կրակոտ պատանին: Նրա անձնուիրութեան և զոհերին չկայ սահման, որոնց նա պատրաստ է, երբ նրա սիրալ կսկսի խօսել: Սակայն որքան յաձախ այդ աղնիւ զգացմունքը ծովում է, շեղվում ու զեղ ձանապարհից և ցեխի մէջ թաւալփում: Միայն այն երիտասարդութիւնից կարելի է խիստ սառն, կոպիտ զատողութիւններ, սարսափելի եսական, արհամարհական ծանակներ լսելոր արատաւորել և աղաւաղել է իւր մէջ այդ զգացմունքը, շոայլելով նրան ընկած կանանց: Մի խօսքով, որքան աւելի խոր ենք թափանցում սեռական կեանքի օրէնքների բուն էութեան մէջ, աւելի պարզ գում է, որ բոլորովին անկարելի է այդ կողմից զէթ մի բան զիջանել իսկ եթէ մենք մի փոքրիկ բան զիջանելու լինինք, կորսարեր ուղի կրբանանք մեր առաջ գեպի ապագայ, հեռաւոր զիջողութիւնները և անմաքուր սակարկութիւնները բարոյական զգացմունքի հետ:

Դեռ մանուկ էինք, երբ կարգում էինք պատմութեան մէջ հոռվմայեցւոց և արելեան բռնակալների մասին «վալաշո-

տութիւնը և խստասրտութիւնը ձեռք ձեռքի տուած են գնում», բայց այն ժամանակ մենք չենք թափանցում այդ խօսքերի իմաստի և նրանց մէջ գշութիւն ունեցող ներքին կապի մէջ։ Շատերը, հաւանական է, մինչեւ այժմ էլ չեն թափանցել ու չեն հասկացել այդ, իսկ ինչ որ ինձ է վերաբերում, ես էլ ոչինչ չեմ կասկածում, մինչեւ որ Դարվինից իմացայ, որ այդ կապը գշութիւն ունի այն իսկ ժամանակից, երբ որձերը էզին տիրելու համար սպանում են միմեանց կատաղել կը ոռուի մէջ, իսկ նա (էզը) հանգիստ կերպով սպասում է յաղթողին։ Ուրեմն այստեղ էլ վալշոտութիւն և խստասրտութիւն է նկատվում։

Այդ երկու կորսատբեր կըքերին ես կաւելացնեմ երրորդը ևս—մնափառութիւն։ Վերջինը մեր մէջ այնպիսի ուժով է զարգանում տակաւին այն նշանաւոր «Հիմնական» երիտասարդական հասակում, որ նրանից յետոյ անգամ, երբ մեզ աջողվում է զգայնութեան բուռն ձգտման յաղթելու, նա ձգում է մեզ բազմաթիւ սըխալների և բարոյական թշուառութիւն-

ների մէջ։ Օրինակի համար նայեցե՛ք ֆըրանսիացիներին<sup>1</sup>։ Նրանց երիտասարդութիւնը բայցարձակ կերպով անձնատուր է լինում բազմունութեան և եթէ այդ հանդիմանքի շնորհիւ նրանց խիզճը և տոհասարակ բարոյական զգացմունքը շատ էլ չեն վնասվում, որպէս մեր երիտասարդութեան մէջ, որ հարկադրուած է գաղտնի ձանապարհներով գնալ բայց այդ բանի պատճառով զարգանում է անհաստատութիւն, գուր գաղթելու և յաղթելու հիւաններից, գուր ցանկութիւն—«անափառութիւնը», որ աւելի խիստ է հարուածում ֆրանսիական հասարակութիւնը, քան որ և է ուրիշ հասարակութիւն։

Ընկնելով «կեանքի վայելչութիւնների» ետեկից, ֆրանսիացիների մնափառութիւնը հասել է այնպիսի սարսափելի ոյժի, որ նրան համարձակ այդ փառաւոր ազգութեան ամենաթունդ և երդուեալ թշնամի թեան ամենաթունդ և երդուեալ թշնամի

<sup>1</sup> Բարոյական վերանորոգութեան գործը, հիմնվելով նշանաւոր անձնաւորութիւնների բազմաթիւ թղթերի և յիշատակարանների վերակ, նրանց մօտ էլ առաջ է գնում, և անցեալ դարի վերջից սկսած, անկասկած խոշոր քայլեր է արել։

կարելի է անուանել (կցանկանայի ասել և միակ). այդ թշնամին տանում է իւր հետ և բոլոր ուրիշ ազգերը: Վերջնենք ֆրանսիացիների հասարակական կեանքը, որ առ հասարակ ոչ այլ ինչ է, եթէ ոչ առանձին մասնաւոր անձերի կեանքի ցոլցումն, հարկաւ, մեծ չափով և երկար ժամանակ չփնտուելու համար, կանգ առնենք ֆրանցիսկոս I, Հենրիխ IV, Լուզիենաներ VIV և XV, յեղափոխութեան գործիչների և վերջապէս նոտոլէօն III-ի ժամանակների վերայ: Ո՞րպիսի հիւանդաս մնափառութիւն, ցուցամոլութեան որպիսի կիրք մարդկային արժանաւորութեան անդութ արհամարհանքի հետ: Իսկ առիթը, որով օգտուեց վերցիշեալ կայսրը ֆրանս-պրուսական պատերազմը հրատարակելու համար. որպիսի անխիղջ մնափառութիւն, որպիսի ուղիղ հաշիւ ազգի սնափառութեան վերայ, որպիսի տչառ թեթեամիտ կուրութիւն ցոյց տօւեց նախը և թշնամու ոյմերի վերաբերմամբ: Ապա հասարակապեառութիւնը: Եթէ ցանկանաւում են, որ հանրապեառութիւնը հաստատուի, հանրապեառութիւն դառնայ բա-

ռիս բուն նշանակութեամբ, և չմնայ միապետութեան սնանկութեան հասարակ հոգաբարձու, ամենից առաջ անհրաժեշտ է կոռուել ազգութեան ամենակուլ սնափառութեան հետ: Վրէժինդրութեան թեթեամիտ ծարաւին, քանիզող գաղթական փորձերին, ծառայող զասակարգի անմիաշռայլութեան (ուրեմն — անառակութեան), զօրքի և նոււասորմղի հրապուրող պճնասիրութեան, այդ բոլորին պէտք է յաղթել: Այլապէս առաջօրէն կարելի է նրա՝ հանրապետութեան անյարատեռութիւնը գուշտկել:

Առ հասարակ եթէ սկսենք զննել ազգերի պատմութիւնը «անձնական պատասխանաւութեան» տեսակետից և որոնել այն մեծ ուշադրութեամբ և մարդկային հոգու ձննաչորսութեամբ, այն ժամանակ կարելի է բաւական նշանաւոր զիւտեր անել: Ազգերի ձակատազրի մէջ բազմաթիւ տխուր յեղափախութիւններ պէտք է առանձին անձերի սնափառութեան կամ «մեծութեան մանիսային» (մենամոլութեան) վերապրել: (Մէկ հոգեբան-բժիշկ մի օր իմ ուշադրութիւնը դարձրեց այսպիսի պատ-

մական անձերի մի ամբողջ շարքի վերայ, որոնք ունեին այդ հիւանդութիւնը):

Մինչդեռ ամենեքեան գիտեն, որ խելագարութիւնը, որ, ի միջի այլոց, արտայայտվում է մեծութեան մանիայի ձեի մէջ, յայտնվում է իբրև հետեւանք յայտնի ժառանգական կամ սեռական հիւանդութեան: Ուստի կարելի է երեակայել թէ որքան ժողովրդական աշխատանք և ընդհանուր առաջադիմութիւն է սպանել այդ սարսափելի հիւանդութիւնը միայն:

Քննենք այժմ երիտասարդութեան սեռական անժուժկալութեան և բազմակնութեան ուրիշ կորստաբեր հետեւանքները՝ զգաստութեան և բարյական հաստատամութեան պակասութիւնը: Մեպհական կրքերին շողոքորթելու սովորութիւնը, որ իւրացրուած է վաղ «Հիմնական» հասակում, կատարելապէս անընդունակ է դարձնում սեպհական անձի հետ վարուելու և տանում է դէպի վերջնական բարյական սնանկութիւնը: Մենք առանձին կարեւութիւն չենք համարում օրինակներ բերելու համար դիմել բացառապէս ուրիշ երկրներ և միայն այն պատճառով օրի-

նակներ կվերյնենք օտար երկրներից, որ իխտ չվերաւորենք մեր սեպհական ինքնասիրութիւնը:

Վերցնենք կրկին նոյն ֆրանսիացուն. ինչի՞ է նմանում ֆրանսիային, երբ նրան ամբողջապէս տիրում է կիրքը, մինչդեռ, սովորաբար, նո կարգին, դէպի ինքը խիստ և հոգետար մարդ է: Նո զըկվում է դիմագրութեան ամեն տեսակ ցյժից և զլիիվայր գնում է բացուած անդունդը: Իսկ այդ անդունդը ամենուրենք հսկում է ֆըրանսիայիներին՝ թէ՛ օտար պետութեան մէջ. թէ՛ հասարակական ժողովարանում և թէ՛ կոռուի դաշտում: Նա՝ անդունդը բացվում է կրքով կուրացածների ոտերի տակ և հազարներով կուլ է տալիս նրանց այն բուգէին, երբ հայրենիքը աւելի կարիք է զգում նրանց հանգիստ քաջութեան մէջ: Ֆրանսիայի աչքի ընկնող զըրողները վերջապէս ուշադրութիւն դարձրին այդ անդունդի վերայ և անինայ ու պարզ նկարազբեցին այն: Այդ մերկացումներից որպիսի անդուսպ, զարշահոտ վարակումն է փչում ամբողջ աշխարհում:

Ուրիմն արմատացած սլակառութեան, սեռական անժուժի լութեան հետևանքը, լինում է կամքի ընդհանուր թուլութիւն, իսկ յետոյ կենսական եռանգի վերջնական անկում, մարդ կորչում է այն ժամանակ, երբ նրանից և նրա գործունէութիւնից ամենամեծ օգուտ կարելի էր սպասել: Օրինակ, Միրաբօն, որ յեղափոխական ձրդումների և վերտնորոգութիւնների հոգին էր, այդ գործունէութեան ամենաշավաս ժամանակը զոհ դնաց իւր անժուժկալութեան: Գամբետան՝ երրորդ հանրապետութեան հանձարեղ գործից նշյնպէս զոհ դնաց իւր անժուժկալութեան այն ժամանակ, երբ հայրենիքը տւելի կարոտ էր նրան և որի մահուան պատճառավ հասարակագետութիւնը խռովութեան և շրփոթութեան մէջ ընկաւ: Արևմտական Սմերիկայում մի անգամ երկրորդ ընտրութիւն պէտք է կայանար մի յայտնի քաղաքագէտի ծերակցուի անդամ ընարելու համար, որ արդէն մի անգամ վարել էր այդ պաշտօնը: Բայց ընարողական նիստի ժամանակ անդամներից մէկը, որ պատականում էր հին պուրիտանական (մաքրա-

կրօնների) աղանդին, վեր կացաւ և ասաց. «Մի անգամ ես տեսայ, որ մեր հռչակաւոր գործիցը ուրախ ընկերների հետ մտաւ հասարակաց տունը, իսկ նա, ով որ կարող է իւր կնոջը խարել աւրիշներին ել կարող է խարելը: Եւ թեկնածուն չընտրուեց: Ե՞րբ կայ այն ժամանակը, որ բարյականութեան նմանօրինակ չափը առանց բացառութեան կյարմարեցնեն բոլորին: Մարդու մէջ ամենավաղ հասակից պէտք է կրթել զարգացնել ամեն տեսակ առաջադիմութեան առաջին պայմանները՝ կենսական էներգիան և զգաստութիւնը (самообладаніє): Մինչդեռ ամենուրեք մենք տեսնում ենք ուղղակի դրան հակառակը. զրեթէ ընդհանուր թեթեամառութիւն, թոյլ բնաւորութիւն, աւելլրդ ջղայնութիւն (нервозность) և կեանքի ուրախութեան կորուսա: Բայց որքան են տուժում գորանից մեր կանայք, երեխաները, ամբողջ ապագայ սերունդը: Ուրախիսի ցաւալի կնիք է զրոշմում այդ մեր ընտանեկան կեանքի, ամբողջ հասարակութեան, զրականութեան վերայ: Բայց այդ ամենը վերին աստիճանի գեղեցիկ կերպով նկա-

արձակագիտության խոստովանութիւն, հենց այդ նոյն-  
պէս յայտնի պէտք է լինի իւրաքանչիւր  
կնոջ, մանաւանդ ամուսնացած կնոջ: Այս,  
եթէ կինը այդ իմանար և այր մարդը խոս-  
տովանուելու քաջութիւն ունենար, ապա-  
գայ սերնդի համար ինքնակատարելագոր-  
ծութեան աշխատառթիւնը ոչ միայն կը-  
թեթևանար, այլ և ներկայ ընտանիքը  
այնչափ կմաքրուեր, որ ընդունակ կդառ-  
նար մանուկներին աւելի խելացի կրթու-  
թիւն տալու, քան այն կրթութիւնը, որ  
այժմ գոյութիւն ունի: Այն ժամանակ,  
գուցէ և մեր զպրոցում ցանկալի փոփո-  
խութիւն կլինէր դէպի լաւագոյն բարքերը.  
ապա թէ գեղարուեսար, թէ գրականու-  
թիւնը նոր ոյժեր կունենային, իսկ լրա-  
գիրները կսկսէին խիստ հետեւ բարցա-  
կանութեան գործերին, կամ որ աւելի վատ  
է, բարքերի ապականութեան չին ծա-  
ռայիլ:

Տղամարդի բազմակնութիւնից թէ ներ-  
կայում և թէ ապագայում առնելում է  
ոչ միայն նրա սեպհական ընտանիքը, այլ  
և նրանք են առնելում նոյնպէս, որոնց մէջ  
նա մացնում է իւր վատ կրքերը և նրանց

ուագրել են ժամանակակից զրողները և ես  
այդ մասին աւելի չեմ երկարացնիլ խօսքո,  
բայց կաշխատեմ ուշագրութիւն դարձնել  
միայն այն բանի վերայ, ինչ որ քիչ մար-  
դիկ են նկատում, կամ որի առաջ բոլորե-  
քեան զիտմամբ փակում են իրանց տչ  
քերը, մանաւանդ կանայք:

Բազմակնութեան կորստարեր սովորու-  
թեան հետեւող մարդը, վերջնականապէս  
չէ ազատվում նրանից, օրինական ամուս-  
նութեան մէջ մանելով անգամ: Եթէ նա  
մինչեւ անգամ իրան զերծ պահի սիրած  
կամ երեխաների պատճուռով փա-  
խստական յանցանքներից (ես զիտեմ այդ  
տեսակի մի քանի սրտաշարժ օրինակներ),  
այնու ամենայնիւ նա մինչեւ իւր կեանքի  
վերջը միշտ թեթե կերպով կվերաբերուի  
դէպի այդ առարկան: Միաժամանակ, եթէ  
այդ տեսակ մարդը իրան յետէ պահում  
բազմակնութեան վատ սովորութիւնից, այդ  
նրանից է լինում, որ նա վախենում է  
կորցնել իւր վարած պաշտօնը: Մի խօս-  
քով մարդուն փրկում է արգէն ոչ թէ  
«կամքը», այլ «հանգամանքը», — ահա  
այդ բանի մէջ ազատմարդը պէտք է բայց

Հետ անբաժան եղող բարցյական ապականութիւնը: Մինչզես, ամօթ է ասել քահանաները անգամ յարձակվում էին ինձ վերայ ասելով, որ բարցյականութեան համաշաւասար, միատեսակ պահանջներ այր մարդկանց և կանանց չէ կարելի անել որ ընտանեկան օջաղը միայն կնոջ անկումը կարող է կեղտոտել բայց ոչ տղամարդու: Սակայն կինը մի՞թէ մէնակ կարող է ընկնել և կեղտոտել ընտանեկան օջաղը: Այդ գործի մէջ իրեն օգնական կամ, եթէ կամենում էք, զլիաւոր պատճառ կրկն տղամարդն է հանդէս գալիս, հետեւաբար նրան առաւել ներողամիտ աշքով վերաբերուել քան թէ կնոջ, աւելի քան անիրաւացի է: Ապա աղամարդկանց այդ բազմակիւնից ամենից շատ ով է տուժում: Մերնաժիշաները, աղախինները, բանուոր և կար անող կանայք և այն: Ապագայում նրանք ել այսպէս կոչուած, օրինական ամուսնութեան մէջ են մտնում և ոչ միայն նրանք են ամուսնանում, այլ և յայտնի պոռնիկները և բարցյական վարկումը աւելի է տարածվում: Այս կերպ վարուելով ինքը հասարակութիւնը զի-

մում է գէպի անկումը, մաշելով իւր գոյութիւնը, և մի օր կգայ արժանի հատուցման աշարկու ժամը:

Վերջացնում եմ ծառիս այս մասը՝ մատնացյց լինելով այն հիւանդութիւնների վերայ, որոնց պատճառը հանդիսանում է դարձեալ նոյն սեռական անժուժկալութիւնը: Մենք արգին խօսել ենք մեծութեան հիւանդութեան (մանիսյի) մասին, որ ամբողջ աշխարհում տարածուել է, աւելի քան թէ կարծում են շատերը: (Համեմատաբար միայն նորերումն ձեռք են զարկել այդ հարցի աւելի լուրջ մշակութեան): Բայց կայ և մի ուրիշ գեռ աւելի սարսափելի սեռական հիւանդութիւնն է: Որքան մարզիկ են կարչում նրանից և որքան շնորհալի, տաղանդաւոր, անգամ շանձարեղ մարզիկ կան նրանց մէջ...: Ամենից հարուստ բնաւորութիւնները յաձախ լինում են և ամենից անսանձ, ուստի կարելի է գատել որչափ մեծ է հասարակութեան համար միայն այդ հիւանդութիւնից ծագող կորուստը:

Այն ժամանակ, երբ ես զրում էի ներ-

կայ տողերը, իմ յիշողութեան առաջ  
պատկերացաւ շնորհալի, տաղանդաւոր  
անձնաւորութիւնների մի ամբողջ շարք,  
որոնց վաղաժամ կորուսար այդ սարսա-  
փելի հիւանդութիւնից ես առիթ եմ ու-  
նեցել զիտելու համեմատաբար իմ ոչ եր-  
կար կեանքի ընթացքում: Ապագայում  
նրանցից շատերը իրանց ծննդավայրի պար-  
ծանքը և փառքը կարող էին լինել—  
մանաւանդ նրանցից մէկը. նրա մասին ես  
համարձակ կարող եմ ասել որ նա հա-  
մաշխարհային հանձար լինելու համար  
ուներ բոլոր պայմանները. միւսը—արդէն  
հասել էր յայտնի փառքի և կարող էր  
աւելի առաջ գնալ բայց նրանք բոլորեքեան  
ոչինչ բանի պատճառով կորան: Եւ թող  
չկարծեն, որ այդ հիւանդութիւնը միայն  
հասարակ գասակարգի մէջ է տարածուած.  
ոչ նա թափանցում է ամեն աեղ հասա-  
րակութեան ամենաբարձր խաւերը:

Մի անգամ, չեմ յիշում երբ, ես առիթ  
ունեցայ զրուցելու մի բժշկի հետ, որ սե-  
ռական հիւանդութիւնների մասնագէտ էր  
և այժմ յայտնի վիրաբոյժ է. խօսակ-  
ցութիւն բացուեց նորերումն յարուցուած

այն հարցի մասին՝ արգեօք որպէս պէտք  
է վերաբերուել այն թեթև կապերին, յա-  
րաբերութիւններին, որոնց գործ է ածում  
ժամանակակից երիտասարդութիւնը կա-  
նանց հետ եղած ժամանակ: Մենք երկուքս  
էլ այն եղածիացութեան եկանք, որ եթէ  
այդ կենակցութիւնների գէմ ուրիշ ոչինչ  
բան չըողաբեր անգամ, անչտի բաւական  
կլինէր այն հանդամանքը, որ այդ ժանա-  
պարհով կինը ամենից հեշտ կերպով կա-  
րող է վտանգաւոր վարակման ենթար-  
կուել և հաղորդել այդ վարակումը գո-  
լոց սերնդին:

Այո՛, հասարակութիւնը իսկի չել  
կասկածում, որ մասնագէտները վերջին  
ժամանակներում որքան հիմնաւոր կերպով  
ուսումնասիրել են այդ հիւանդութիւնը  
իւր բոլոր արտայայտութիւններով: Նա  
չգիտէ, որ այդ բոլոր փչացած ասամները,  
աչքերը, ականջները և ուրիշ մարմնական  
այլանդակութիւնները՝ մեր նախնիքներից  
մեզ մնացած ինքնառնչացման ժառանգու-  
թիւն է:

Ֆրանսիայում վաղուց արգէն այդ խընդ-  
րի վերաբերմամբ բազմաթիւ մասնագիտա-

նութիւնը կարող են նոյնը անել իւրեանց ընտանիքներում): Իսկ բնական կատարելագործութեան օրէնքը հետեւեալ բանի մէջ է կայանում: Եթէ ես բնաւորութեան որ և է լաւ զիծ կամ ընդունակութիւն ժառանգեմ, ապա զարգացնեմ այն իմ մէջ մինչև աւելի մեծ կատարելութիւն,—զուցէ մինչև տաղանդի աստիճանը,—և յետոց երեխաներ ունինամ, սրանք ինձանից կարող են ժառանգել ոչ միայն նոյն ինքն ընդունակութիւնը կամ բնաւորութեան գիծը, այլ և ոյժը, եռանդը, որ ես նրան կատարելագործելու աշխատութեան մէջ գործ եմ դրել: Բայց այդ դրութեան հակառակորդները վիճում էին այն մասին, հաւանականաբար, այն պատճառով, որ ընդունակութիւնը կամ հակումը (օրինակ գեղարուեստական) ցանկանում էին նոյն իսկ այն ձեռվ ժառանգած տեսնել, որով նա տռաջին անգամ երեան եկաւ: Այդ, ի հարկե, չէ կարելի պահանջել: Ծնողներից մէկի կամ միւսի կողմից եղած ազգեցութիւնը (և ուրիշ երկրորդականները), հարկաւ, յայտնի կերպարանափոխութիւններ ունին իբրև ընդունակութեան արտա-

յայտութեան (проявленіе) հետեւանք: Նմանապէս, եթէ ես որ և է վատ հակում (կամ սովորութիւն) ժառանգէի և ժամանակին նրանից փրկուէի կամ թէ փոքր ինչ թուլացնէի իմ մէջ այն հակումը, զաստիարակների խելացի օժանդակութեան շնորհով, որ բացաւ ինձ այն աղբւարը՝ ումնից է անցել ինձ այդ հակումը և այն, որ նրանք իրանք տուժել են նրանից. և սրանք (զաստիարակները) զրգել են ինձ կամքի ուժով իմ՝ վատ հակման յաղթելու փորձերի մէջ աւելի առաջ գնալ քան այդ աջողուեց նրանց, —այն ժամանակ իմ պատճենները կարողանային ժամանակակիցները այժմ այս կերպով ինքնակատարելագործութեան աշխատութիւնը նրանց համար նշանաւոր կերպով կղիւրանար, իսկ նրանց միջոցով՝ նրանց յետնորդների համար և այլն: Ուստի այդ օրինակ կաշխատէի ոչ միայն ինձ համար, այլ և իմ ամբողջ հետագայ սերբնդի համար:

Սյսպէս ուրեմն, երբ ցեղի մէջ զոյութիւն ունեցող բնական կատարելագործու-

թեան այդ մեծ օրէնքը, դպրոցներում դասաւանդութեան, եկեղեցիներում քարոզի և ընտանիքներում խրատների առարկայ կտառնայ, երբ նա ամենքի համար նցնապէս յայտնի և հաւաստի կլինի, որպէս ժառանգականութեան ընդհանուր օրէնքը, այն ժամանակ նա միայնակ կառաջնորդի կրթութեան դործը գէպի արմատական վերանորոգութիւններ:

Ես յիշեցի դպրոցի և եկեղեցու մասին: Առհասարակ որպիսի մարդկանցից են ընտրվում ուսուցիչները. — այնպիսիներից, որոնք աջողութեամբ յայտնի քննութիւն են տուել: Բայց պահանջուած առարկաների մէջ լաւ գիտութիւն յօյց տալով միայն, մի՞թէ կարելի է և լաւ ուսուցիչ լինել: Մանկան հետ գաս անցնել, նրան գաս տալ և ապա կրկին պահանջել նրանից նցն դասը, — մէ՞թէ այդ բաւական է: Դասաւուութեան նմանօրինակ եղանակի համար ինչ տեսակ խրտուիլակ (чурбанъ) կտամենաք, կարելի է ընտելայնել (въидрес-сировать): Ո՛չ միայն նա, ով լուրջ բարձր նշանակութիւն ունեցող ժամին, երբ նրա առաջ բացվում է մանկան հա-

ւատով և հարցասկրութեամբ լի հոգին, —ոչ միայն կարող կլինի որ և է առարկայ խելացի և պարզ կերպով նկարագրել նրան, այլ մի և նցն ժամանակ ազգել աշակերտի վերայ խօսքերով և իւր ամբողջ կութեամբ մինչեւ այն աստիճան, որ նրա՝ աշակերտի մէջ հաւատ և ձգտում կրզարթնի դէպի աւելի մեծ, աւելի շատ գիտութիւն ունենալը, միայն նա, կրկնում եմ ես, «արժանի է ուսուցչի անուան»: Ուրիշները լաւ կանէին, որ բնաւ ձեռք շտային մի գործի, որ իւրեանց բանը չէ: Այլապէս խօսելով՝ իւրաքանչեւր ուսուցիչ մի և նցն ժամանակ պարտաւոր է դաստիարակիչ կամ «բարոյագիտական տաղանդ» լինելու:

Մենք արդէն առաջ ասացինք, որ տաղանդը յայտնի ընդունակութեան կամ հակման՝ կատարելութեան աստիճանին հասցրած զարգացում է: Այսպէս է նա միշտ: Օրինակ, գոյութիւն ունին ամբողջ սերունդներ և ընտանիքներ, որոնք մանաւանդ բարի հակումներ են զարգացրել իւրեանց մէջ: Այդ ընտանիքների անդամներից մի քանիսը այնպիսի բարոյական բարձ-

բութեան են հասնում, որ բաւական է լի-  
նում նրանց հետ խօսել միայն և, կար-  
ծես, ամեն ինչ պարզվում է ձեզ համար,  
իսկ նրանց հետ ծանօթանալով, դուք ինք-  
եանքդ բարոյապէս աւելի կբարձրանաք:  
Այսպիսի մարդիկ—«բարոյագիտական տա-  
ղանդներ» են: Նրանք ամեներեան հռչա-  
կուած են իւրեանց կոչմամբ և սիրով զէ-  
պի կրթութեան գործը: Մեզ մօտ չիւսի-  
սում այդ գործը, գիբաղդբար, այնպէս  
է դրուած, որ նմանօրինակ մարդկանց մե-  
ծամասնութիւնը իրան հեռու է պահում  
նրանից:

Մի անդամ ես մոսայ այդպիսի բարոյա-  
գիտական տաղանդներից» մէկի իրաւասու-  
թեան տակ գտնուող գպրոց, դպրոցը փոքր  
էր և բոլոր աշակետները ներկայ էին: Յ-  
պա ուսուցչի հետ առանձնացած ժամանակ,  
ես ասացի նրան: «որչափ ես տեսնում եմ  
այդ գպրոցում ոչ ոք վարակուած չէ յայտ-  
նի արատով»: — «Ոյ՛», պատասխանեց նա,  
«յշս ունիմ, որ ինձ աջողուել է բոլորո-  
վին արմատախիլ անել այդ»: — «Ի՞նչ ե-  
ղանակով»: — «Ոյ՛, ես, կարծեմ, զիտեմ  
մանկան մօտ նստել և կամացուկ նրա հետ

խօսել նրա հոգով: — «Բայց գրանով միթէ  
ամեն բան կարելի է աջողեցնել: » Ո՞չ  
բացի այդ, ես ամենքի հետ բացարձակ  
խօսել եմ, և այժմ այն տեղն է հասել  
որ իրանք մանուկները հսկում են մի-  
մեանց, իսկ այդ մանկական փոխադարձ  
հսկողութիւնից խիստ բան դժուար է գըտ-  
նել: Ուսուցիչը գեռ աւելացրեց, որ այդ  
արաւար բնական պահանջի հետեանք չէ,  
ընդհակառակն, մինչև այն աստիճան հա-  
կաբնական է, որ ոչ ոք մտքով անգամ  
չի անց կացնի անձնատուր լինելու նրան,  
եթէ ուրիշները այդ նրան չսովորեցնեն:  
Գիբաղդբար, այդ ախար մեր շատ ու  
շատ գպրոցներում, այնու ամենայնիւ, խիստ  
տարածուած է և այն չի կարելի արմա-  
տախիլ անել: — այդպէս վատ են լուծում  
իսկապէս իրանց բարոյագիտական դերը  
արդի գպրոցները: Մենք մանուկներին այն-  
տեղ ենք ուղարկում, որ նրանք կրթուեն,  
իսկ դրա փոխարէն մենք յանախ ուղղակի  
գցում ենք նրանց սարսափելի արատի  
գիրկը, որ զէպի բազմակնութիւն տանող  
առաջին աստիճանն է:

Երբ վերջապէս «բարոյազիտական տաղանդները» իրանց ձեռքը կվերցնեն և կարգի կբերեն դպրոյական գործը (որ անպատճառ կլինի), մարմնամարզութիւնը և ձեռքի աշխատանքը ոչ միայն ուսման դասընթացքի պարտաւորեցուցիչ առարկաների թուի մէջ կմտնեն, այլ և անկարելի կլինի ենթադրել այնպիսի դպրոցի գոյութիւն, որ բժիշկ-ուսուցիչ և քարոյազիտական տաղանդ» ըսւնենար: Սյո՛, մեզ հարկաւոր են բժիշկ-աղամարդիկ և բժիշկ-կանայք, դպրոցները երկու սեռերի համար էլ պէտք է ընդհանուր դառնան, որ մանուկները մատադ տարիներից ընտելանան միաբանական ընկերական կեանքին և դագարեն միմեանց վերաբերուել այն կասկածուաքրքրութեամբ, որով այժմ վերաբերվում են: Երկու սեռերը բաժանող՝ նախապաշարմանքների մի ամբողջ պատուարի շնորհով, նրանք միմեանց նայում են որպէս հազուազիւտ թունների վերայ և զանազան երեակայական բաներով լցնում իրանց զլուխը այն մասին, ինչ որ տակաւին լաւ չգիտեն: Քանի որ «դասախրակութիւնը», որպէս ուսուցման ա-

ռարկայ, չէ մտնում դպրոցական ծրագրների մէջ անդամ (թէպէտև «իւր և իւր գալոց սերնդի մարմնական և հոգեոր առօղջութիւնը պահպանելուց աւելի կարելի բան ոչինչ չկայ» — Սպենսեր), չէ կարելի նրա մասին հասարակութիւնից առանձին հոգատարութիւն սպասել:

Բայց ես գուշակում եմ, որ, երբ բարոյական կեանք վարելու պահանջը (ներկայումն մի քանիսը միայն անում են այդ պահանջը), ընդհանուր կդառնայ, ամենքի կողմից լուրջ կերպով կընդունուի, նա վերջնականապէս կկերպարանափոխի մեր կրթութիւնը, մեր դպրոցը և մեր ընտանիքը:

Սյո՛, նա դեռ աւելին կանի!

ՀՀ.

Մեր ձառի սկզբում մենք ամուսնաւալու համար բնական հասակ (25 տարին այր մարդի և 20 տարին կնոջ համար) կամ այսպէս կոչուած «չափահասութիւն» որոշեցինք, որից առաջ պէտք է խիստ ողջախոհութիւն պաշտպանել:

Գուցէ շատերը կասեն, որ չափահաս գառնալուց յետոյ էլ ոչ ամենեքեան կարողանում են, այսպէս կոչուած, օրինական ամուսնութեան հետ կապուած պարտաւորութիւնները իրանց վերայ առնել: Այդ ձիգդ է, շատերը չեն կարողանում ամուսնալ, որովհետեւ կենսական պայմանները խիստ ծանր են մեր ժամանակներում, բայց կրինում եմ, եթէ չափահաս ժամանակ ամուսնանալը բնութեան հրաման դառնար նոյն իսկ՝ հասարակական կեանքը անպատճառ կյարմարուէր զբան:

Ուրիշները կասեն, որ, եթէ երիտասարդութիւնը մինչև չափահասութիւնը և ամուսնութիւնը պահպանի իսկ իւր ողջախոհութիւնը, նոյն ինքն ամուսնութեան մէջ նա, այնու ամենայնիւ, դադարում է ժուժկալութիւնից: Չեմ վիճիլ այլ կասեմ միայն, նրա համար, ով կրնտելանայ ժուժկալութեան մինչև ամուսնութիւնը, աւելի հեշտ կլինի ժուժկալութիւն պահպանել ամուսնութեան մէջ և մանաւանդ այն ժամանակ, երբ այդ հարկաւոր է:

Վաղաժամ նշանադրութիւնները վաղուց յարձակումների առարկայ են դար-

ձել: Ասկայն այդ յարձակումները միայն այնքան են արդարացի, որքան բացառապես էստելիքական (գեղասիրական) տեսակէտից են նայում: ամուսնութեան վերայ, իսկ բարցական տեսակէտից վաղաժամ նշանախօսութիւնները կարելի է գովիլ միայն: Այսպիսի նշանադրութիւնները, ես չեմ խօսում պաշտօնական նշանադրութիւնների մասին, որոնք կատարվում են ձեռք զարկելով (րյուօնից) և օժիտի մասին պայմանագիր կապելով և այն, կապվում են այն հիման վերայ, որ օրիորդը հաւատացած է թէ փեսայացուն ընտրել է նրան, իսկ փեսայացուն պատրաստ է իւր գլուխը զրաւ գնել որ հարմացուն կապասի նրան, և ահա նրանք սպասում են:

Եթէ մենք հաւաստի տեղեկութիւններ ունենայինք այն մասին թէ որքան փորձութիւններից և գայթակղութիւններից փրկել են այսպիսի նշանախօսութիւնները երիտասարդներին, մենք նրանց նշանախօսութիւնները կօրհնէինք: 'Ի հարկէ, եթէ գործը պէտք է ամուսնութեամբ վերջանայ, անհրաժեշտ է, որ երիտասարդ գցյդերը այդ սպասողական շրջանի ժամանակ

միմեանց հետ կատարելապէս բացասիրտ լինեն, բաժանեն իրար մէջ այն ամենը, ինչ որ ալեկոծում է նրանց սիրտն ու միտքը, հաղորդեն միմեանց բոլորը, ինչ կարողացել են ուստանել, որ լիովին հաւատացած լինեն այն բանի մէջ թէ նըրտնք ապագայումն էլ կարող են բաղկաւոր կերպով ձեռք ձեռքի տուած գնալ կենսական ծանապարհով։ Եւ մենք տիսնում ենք, որ բաղկաւոր ամուսնական զոյգերի մեծամասնութիւնը իրանց բաղդաւորութեամբ պարտական են հէնց այդպիսի վաղ նշանախօսութիւններին։ Վաղերիտասարդութեան ժամանուկ բնութեան ձայնը ցցց է տալիս, իսկապէս ի՞նչ է հարկաւոր մարդկային բնութեան հոգեոր և մարդնաւոր բաւականութեան համար և նա այնպէս ուժեղ կերպով է հնչում մորդկանց մէջ, որ, սովորաբար, խեղփում է բոլոր ուրիշ պահանջները և կշռադատութիւնները։

Բայց եթէ չափահասութեան համակարգ յետոյ վաղ ամուսնանալու համար կանոն սահմանուի, այն ժամանակ անհրաժեշտ է, որ իրանք երիտասարդները և նրանց

ծնողները իրանց տնչափ ցանկութիւնները և պահանջները նիւթական ապահովութեան վերաբերմամբ չափաւորէին։ Մինչեւ այժմ կինը առհասարակ չէր կարողանում կամ չէր կամենում, մեծ մասամբ, ընտանիքի համար գցութեան միջոցներ գտնելու, աշխատութեան իւր մասը տանելու, ուստի նրա պահանջները ոչ թէ նրա ընդունակութիւնների, այլ միայն քմահաճոյքների հետ էին համաձայնվում։ Անկասկած, կնոջ աւելի ինքնուրոյն կրթութիւնը և լուսաւորութիւնը փոքր առփոքր գրան վերջ կդնեն։ Գիւղացիների ամենազիւաւոր տեղը տան մէջ խոհանոյն է, այնտեղ ձաշի ժամանակ ժողովվում է ընտանիքը և այնտեղ էլ անց է կացնում ազատ ժամերը։ Ես շատ ուրախացայ գրանման բան տեսնելով ամերիկական քաղաքներում։ Իւրաքանչիւր միջակ շրջանի (երբեմն և աւելի բարձր) ընտանիքի մէջ ընդարձակ, լուսաւոր, մաքուր օդափոխութեամբ խոհանոյը առաջին տեղն է բըռնում։ Խոհանոյի մէջ է սալածածկ հնոյը (плита), որ երբեմն իրանից ներկայացնում է գեղարուեստական արտադրութեան

նման մի բան, յաճախ յատակի վերայ  
կան բազմոց ու գորդ: Օրուայ որոշուած  
ժամին խոհանոցի գոները բացփում են և  
միւս մենեակները ձրի տաքութիւն է տա-  
րածվում: Ամերիկայում այսպէս համեստ  
կերպով չէ թէ մի ընտանիք է սկսում, որ  
ապագայում մեծ բարօրութեան է հաս-  
նում, այլ շատ ընտանիքներ: Իսկ մեզա-  
նում հիւրասենեակը և սեղանատունը ա-  
ռանձին սենեակներ են. երկայն, նեղ և  
ծինելցզի պէտ մութ անցքը—կորրիդորը  
(միջանցքը) նրանց միջով տանում է դէպի  
խոհանոց, որ մեծութեամբ սովորական վան-  
դակից մեծ չէ: Այդ փոքրիկ վանդակի մէջ  
պէտ ու գէն է գնում ադախինը, որի վե-  
րաբերմամբ տանակերերը իրանց ոչինչ բա-  
նով պարտական չեն համարում, և որի  
հետ ընդհանուր ոչինչ չունեն, բայց երի-  
տասարդ տիկինը հանգիստ նստած է հիւ-  
րասենեակում, պահպանելով իւր փոքրիկ  
քիթը խոհանոցի ածխահոտից: Ինձ գուցէ  
կհակածառեն, որ փարթամութեան (կօմ-  
ֆօրտի) պահանջը առաջադիմութեան պայ-  
մաններից մինն է, բայց ես կպատասխա-  
նեմ, որ շատ լաւ կարել է հասնել կօմ-  
ֆօրտի՝ խոհանոցից սկսելով:

Այսպէս ուրեմն, ֆիզիքական և հոգեօր  
շտիահասութեան հասնելուց յետոյ, ան-  
յապազ ամուսնանալու հնարաւորութիւ-  
նը այն դէպումն է ձեռք բերվում, երբ  
հասարակութիւնը առհասարտկ պակասե-  
ցնի իւր պահանջները կեանքի նիւթական  
բարիքների վերաբերմամբ, և բայցի այդ,  
երբ երկու ամուսինները միասին՝ իւրա-  
քանչիւրը իւր կողմից կարող կլինեն աշ-  
խատելու՝ գոյութեան միջոցներ ձեռք բե-  
րելու համար:

Նատերը կասեն, երբ մի անգամ երիտա-  
սարդ զցյգը երեխաներ է ունենում, այն  
ժամանակ արգէն մնաս բարեաւ ընդհա-  
նուր աշխատութեան իդիլիա: Սակայն  
նմանորինակ անյարմարութիւններ չեռաց-  
նելու համար, անկասկած, անհրաժեշտ մի-  
ջոցներ կդանուեն: Մանկական պարտէզները,  
որ փոքր առ փոքր ամենուրեք սկսում են  
տարածուել այդ հարցի լուծման համար  
իրեւ առաջին քայլ են հանդիսանում:

Մի քանի մարդիկ, ՚ի միջի այլոյ, մա-  
քառում են այնպիսի ամուսնութեան հա-  
մար, որից ծննդաբերութիւն չառաջանար,  
այսինքն, ամուսնութիւնը լիներ, բայց ե-

բեխաներ ոչ։ Ատկայն, իմ կարծիքով, այդպիսի մարդիկ կեղծ ձանապարհի վերայ են գտնվում։ Ուրիշ բան է, եթէ արդէն ամուսնացած մարդիկ չեն կարողանում ժուժկալ լինել (մանաւանդ երբ պէտք է այդ) և մի և նոյն ժամանակ անկարող են երեխաների մի ամբողջ խումբ կերակրել և կրթել։ Այսպիսի դէպքում յիմարութիւն և վախկոտութիւն կլինէր չխօսառվանուել, որ աւելի վատ է շատ երեխաներ ծնելը, որոնք ոչ ոքի հարկաւոր չեն և որոնց ոչ ոք չէ կրթելու, քան նրանց ունենալուց բոլորովին հրաժարուելը։ Բայց ինչ էլ որ լինի, մարդկանց մեծ մասը գերազասում է ամուսնական կապերից ազատ մնալը։ Այստեղ ևս չեմ կարող առաջ չգալ իմ պատասխանով այն կենսարանների դէմ, որոնք պնդում էին, որ ամուսնութիւնը իւրաքանչիւր մարդկային գոյութեան նպատակն ու խորհուրդն է։ Իմ կարծիքով շատ ու շատ աղամարդիկ և, մանաւանդ, կանայք ամենեին սաեղծուած չեն ամուսնական կեանքի համար<sup>1</sup>։ Եւ

<sup>1</sup> Ի դէպ այստեղ ես ցանկանում եմ ցըռւել

ի՞նչպէս մենք՝ մնացած ընտանեկան մարդիկս, եօլա կգնայինք, եթէ այդ այդպէս չլինէր։

Ո՞քան մենք շնորհակալ պէտք է լինենք այն նաժիշտաներից, որոնք գեպի մեզ և մեր երեխաները տածած սիրուց և բարեկամութիւնից երկար տարիներ մնում են մեր տանը, պահպանելով և խնամելով նրանց համար օտար՝ մեր ընտանեկան օջախը։ Այն, եթէ մարդկային հասարակութեան մէջ այն ամենը, ինչ որ լաւ է փայլէր պայծառ լուսով, իսկ մենք կանգնած բարձր լերան վերայ նրան նայեինք,

բաւական տարածուած մոլորութիւնը, իբրև թէ կանայք այր մարդկանցից առ հասարակ շատ են ծընվում, և այս օրինակ ինքը բնութիւնը, կարծես ցոյց է տալիս՝ «երկուսը մէկի համար»։

Մինչդեռ որքան կարելի է ստուգել, թէ արական և թէ իգական սեռերը հաւասար թւով են ծընվում, և տղամարդիկ կանանցից մի փոքր շատ են անգամ, բայց «հիմնական հասակում արական սեռի երիտասարդութիւնը իրան այնպէս է պահում, որ նրանցից աւելի շատ են մեռնում և խելազարփում, քան թէ կանանցից։ Նոյն իսկ հետագայ հասակներումն էլ այր մարդիկ մեծ թուով են մեռնում, երիտասարդութեան մեղքերի պատճառով։

Երոլոր այդ ճրագները՝ մեր ազնիւ և սնձնուելի ծառանելրը; որոնք լուսաւուրում և տաքայում են մեր անային օջաղները, յանկարծ հանգչէին, — այնտեղ ներքեռում ինչպէս կըմթնէր. . . : Բայց համեստ վարժուհիները, որոնք հրաժարուել են (կամայ թէ ակամայ—մի և նոյն է) իրանց սեպհական օջախը ունենալու բաղդից, որոնց ծառայութիւնները նրանցից բարձր կարելի է դասել: Նրանք դպրոցները մեր երեխաների համար ոչ թէ միայն օջախ են դարձնում, այլ և նպաստում են այն բանին, որ այդ երեխաները ժամանակով կարողանան իրանց սեպհական օջաղները հիմնել: Ո՞հ, եթէ մի որ մենք բարձրանայինք մինչև այն աստիճան, որ կարողանայինք նմանօրինակ վաստակաւոր կանանց ծառայութիւնները ճիշդ կերպով հասկանալ ու ճանաչել, և վերջապէս սկսէինք յարգել կնոջը իւր սեպհական պատուի համար, և ոչ թէ նրա հօր, ամուսնի կամ այլոց պատճառով:

Եւ այն մարդկանց թիւը, որոնք չեն կարող օրինական ամուսնութեան մէջ մըտնել և մի և նոյն ժամանակ չեն կարողա-

նում սեռական հակման մէջ ժուժկալ լինել—ահազին է: Այս, այդ զարմանալի չէ իսկ, երբ մեր հասարակական պայմանները, զգայական հակումներին դիմադրելու փոխարէն, միայն վառում, բորբոքում են նրանց:

Փորձութիւնը թոյլերին հսկում է ամենուրեք, թէ թատրոնում, թէ զբականութեան, թէ գեղարուսակի և թէ մասուլի մէջ: Վերջապէս թոյլերին փորձութեան մէջ են զցում նոյն իսկ մեր կեանքի բարքերը ու սովորութիւնները՝ պարահանդէմները, պաքանքները, մօդան... բոլորը, բոլորը: Եւ ժամանակակից հասարակութեան հայեացքները յետ չեն դառնում այդ փորձութիւններից, այլ ընդհակառակները, ամեն տեղ անյագաբար կլանում: Բայց մի և նոյն ժամանակ հասարակութիւնը անշտփ իխսու է դէպի այդպէս կոչու ած «անկումները»: Ես այդ հանդամանքը բացատրում եմ մարդկութեան դէպի առաջադիմութիւնը ունեցած այն ակամայ ներքին ձգամամբ, որ բացվում է մեր մէջ մեր բոլոր մեղքերի և շեղումների հակառակ և հարկադրում է

մեզ անարդարացի կերպով խիստ լինել դէպի հասարակութեան գեռ աւելի թոյլ անդամները անդամն Բայց մենք պէտք է հասկանանք, որ մեր պարտականութիւնն է նրանց ոչ թէ դատապարտել ու մերժել այլ ցաւել ու օգնել նրանց, մանաւանդ, երբ յանցաւօրութեան հետեանքը երեխայի ծնունդ է լինում: Երեխան պէտք է ծառայի իրեւ քաւութիւն. այդ է թելագրում ցեղի պահպանութեան հոգարք: Հենց ուրիշ աւելի նշանաւոր յանցանքները երբեմն կարելի է հիւանդու հակումներով բացատրել. հետեաբար անհրաժեշտ է աշխատել նրանց բժշկելու: Վրանսիայում արդէն հասել են զրան: Այնտեղ ջղային հիւանդների, ալքօօլի, մօրփիտի, ափիսնի և անառակութեան գժբաղդ զոհերի համար գոյութիւն ունի բուժարանների մի ամբողջ շարք, և շատերը, որոնք զրեթէ գերեզմանի շէմքին էին կանգնած, այնտեղից զուրս են գալիս և մարմնով և հոգով առողջ: Այդ գործը մեծ ապագայ ունի և երբ նա ամուռ հողի վերայ կկանգնի, երբ մեզանում էլ ամենուրեք կտարածուեն նմանօրինակ ապաստարաններ, մարդիկ կը-

հասկանան, որ իւրաքանչիւր հասարակական չառիք հասարակութեան ժառանգական կամ նոր ձեռք բերած հիւանդութեան արգասիք է, որ օգնութիւն է աղաղակում: Մի և նոյն ժամանակ պարտք եմ համարում զիմել նրանց, որոնք սեռական կեանքի աւելորդութիւնների մէջ այնքան հեռու են գնացել որ իրանք էլ իրանց բժշկութեան մէջ յուստհատուել են արգէն. մի՛ վհատիք, հաւատացած եղէք, որ փրկութիւնը հնարաւոր է ամենքի համար առանց բացառութեան. միայն աւելի քաջութիւն և հաւատ ունեցէ՛ք, զուք տակաւին չփիտէք, որպիսի քայլեր է արել դիտութիւնը այդ մասում:

Ես առաջ կրերեմ մէկ հոչակաւոր մարդաբանի խօսքերը ցոյց տալու համար, որ ասի մարդիկ պատրաստ պէտք է լինեն մոլորուածներին շերմ սրտով օգնութիւն մատուցանելու: «Մեր ջղերի մէջ հոսում է մեր նախնեաց արիւնը, այն մարդկանց, որոնք զողանում, գնում և վաճառում էին իրանց կանանց: Մեղ էլ երբեմն կարող է տիրել անսաստն կիրքը դէպի կինը, որ զանազանում է մեզ աւստրալիացիներից

ու հրտակնտոաներից կամ,—որ դեռ աւելի վատ է,—նախնական մարդկանցից:

Մարդի մէջ առհասարակ անցեալը, ներկան և ապագան: այն աստիճան կապուած են իրար հետ, որ պէտք է ամենամեծ զգուշութեամբ և ներողամտութեամբ վերաբերուել դէպի մարդը և նրա արարքները: Եւ չնայած զրան, որքան մէնք մեր նախնիքներից առաջ ենք գնացել: Մենք կարողանում ենք յաղթել մեր հեշտասիրութեան, կարող ենք մինչև մահ սիրել մոռուր, պղատօնական սիրով, կարող ենք մեր սիրոյ հակումը բնագրման ամեն տեսակ խառնուրդից աղտանել և ամբողջապէս միոք և դգացմունք դարձնել այն, կարող ենք զղոհուել մոռուր և վեհ զրդումների համար: Մեր ուղեղի մէջ ոյժ է կենոփրոնանում՝ որ բոլոր ուրիշ ոյժերը, նրանցից ամենաբռնակալականը անգամ սահնաշհարում է, որ երեան է գալիս իբրև մեր կազմի կենոփրոնախոյս ոյժ, ոյժ, որ կարող է կենդանուն այն աստիճանի հասցնել, որ անհատը զոհվում է յեղի համար»:

Վերջապէս թոյլ կամ ինձ յիշելու այն արդարացման մասին, որի վերաց յեն-

վում են բացարձակ բազմակնութեան հետականները՝ մահմետականները և մորմոնները՝ «յդի կնոջը պէտք է հանգիստ թողնել ապա թէ ոչ հեշտասիրութեան ժառանգութիւնը մանկան մէջ խիստ զօրեղ կինի»: Գալոց սերնդի օգտի համար միայն կանանց ստիպել ժուժկալ լինելու, իսկ իրանք—տղամարդիկ իրանց անձը վախկոտութեամբ ազատեն զրանից—լաւ արդարացում է, ի՞նչ ասել կուզէ: Այն խընդիրը, որ այդ մարդիկ շօշափում են իրանց արդարացնելու համար, մեծ կարեւորութիւն ունի և այն լուծելու համար մեղանում վերջին ժամանակներս ոչ սակաւ են աշխատում: Մի քանի բժիշկներ այդ հարցը բացասական մաքով են վճռում, միւսները զրական: Ես չեմ մանիլ նրանց կարծիքների քննութեան մէջ, բայց իմ կարծիքով, ինքը դրութիւնը ձիշդ է՝ մօր մաքառումը և հեշտասիրութեան յաղթութիւնը ապագայում մանկան վերայ իրանց հետքը պէտք է թողնեն այնպէս, որպէս և հակառակ վերաբերմունքը: Այս կերպով այդ զրութիւնը հանդիսանում է այն խորին ճշմարտութիւններից մէկը, որոնց կա-

րելի է «խոր» աչքերի հետ համեմատելը երբ նայում ես այդպիսի աչքերին, նրանց խորութիւնից, կարծես թէ քեզ վերայ նայում են գեռ ինչ որ ուրիշ աչքեր, այդպէս և այդ ճշմարտութեան յետեռում թագնուած է մի ուրիշը, որ խիստ կնայի մարդկութեան, մինչև որ նա վերջապէս չի հնազանդուի:

## ¶

Նախ քան իմ ճառը վերջացնելը, մի քանի խօսք էլ կասեմ գեռ ապահարզանի մասին, որ շատերը անթցյլատորիլի են համարում այն հիման վերայ, որ նա իրեւ թէ բազմակնութեան մի տեսակ խրախոյս է ծառայում:

Անտարակիցս, միայն այն ամուսնութիւնը կարելի է «միակնութիւն» կոչել որով ամուսնանում են երկու ամուսիններ ամբողջ կեանքը միասին ապրելու ազնիւ զիտաւորութեամբ: Սակայն դրանից չի հետեւում, որ ամուսնութիւնը առհամարակ անխղելի չէ, որքան անաջող և սխալ լինէր նա:

Այն երկար տարիների ընթացքում, որ ես աշխատում եմ ամուսնական հարցի վերայ, ինձ շատ անգամ գովելի հաւատարմութիւն է ցցց տրուած ընտանեկան կեանքի գաղտնի կողմերի մասին, և ես հնարաւորութիւն եմ ունեցել համոզուելու, որ անաջող պատկների մեծ մոսր պարտական են իրանց գժբաղվութիւնը ամուսինների մինչև ամուսնութիւնը անցուցած սանձարձակ կեանքին:

Բազմակնութիւնը, որի մէջ այր մարդիկ անցուցանում են իրանց երիտասարդ գովութիւնը, զրեթէ միշտ ցոյանում է օրինական պատկի վերայ, որպէս անհաստատութեան, թեթեամուսնութեան, դաւաճանութեան և անհաւատարմութեան կամ կիւանդոտ ջղայնութեան, յափրութեան, մելամաղձութեան սովորութիւն, չխօսելով արդէն ամենից սարսափելի բանի մասին՝ սեռական յայտնի հիւանդութեան և նրան ուղեկցող բոլոր հիւանդութիւնների մասին: Համոզուելով դրանում և գիտենալով որպէս անմիտ-թեթեամիտ կերպով կատարվում են իսկապէս ժամանակակից ամուսնութիւնները, ես հէնց այդ պատճա-

ռով ապահարզանը թեթևացնելու կողմն  
եմ: Զի կարելի անսիրտ կերպով պնդել  
ամուսնացած կնոջ իբրև նրա գանգատնե-  
րին պատասխան՝ «Համբերիր, դու երե-  
խաներ ունեսր, նրանց մէջ է քո փրկու-  
թիւնը», երբ ամուսնական կեանքը օրէցօր  
փշում և ջլատում է նրա հոգեկան և  
մարմնական ոյժերը: Եթէ նա կարողանար  
երեխաների մէջ փրկութիւն գտնել, նա  
չէր տանջուկի մաքառման մէջ և չէր գան-  
գատուիլ: Արդեօք շատ օգուտ կարող է բե-  
րել երեխային տանջուած և յուսահատու-  
թեան հասցրած մայրը: Ու մինչդեռ հա-  
սարակութիւնը իւր ըջանում համբերում  
է բազմակնութեան, նա առանձին դէպ-  
քերում պիտի ապահարզան էլ թոյլ տայ:  
Բացի այդ հասարակութիւնը ամուսնուց  
բաժանուած կնոջ չպէտք է յարդանքից  
զրկի և անարժան համարի այն յարգան-  
քին, որ վերայ, սովորաբար, իրաւունք ու-  
նի ամուսնացած կինը: Եթէ կինը վըճ-  
ռում է իւր պսակը խզել իւր բարցյական  
արժանաւորութիւնը փրկելու համար, նա  
աւելի մեծ յարգանքի է արժանի քան  
իրանց ամուսինների հետ ապրող բազմա-

թիւ կանայք, և հասարակութիւնը պար-  
տաւոր է նրան այդ յարգանքը մատու-  
ցանել:

Ապա կփորձեմ գեռ ուշագրութիւն  
դարձնել հասարակութեան մէջ առաջա-  
ցած իդէալների յեղաշըման վերայ, որ  
մանաւանդ արտայայտվում է այն հանգա-  
մանքի մէջ, որ մեծամասնութեան աչքե-  
րում բազմակնութիւնը ըջապատուած է  
քաջութեան և փառքի ինչ որ լուսա-  
պսակով (օրեօլъ):

Մենք առաջուց արգեն շօշափեցինք այդ  
հարցը, խօսելով զիւր գալու մնափառ,  
գատարկ կրքի մասին, որ սպանում է մեր  
երիտասարդութիւնը կարեսը «Հիմնական»  
հասակում: Արդարեւ, եթէ այդ կիրքը այն  
ժամանակ ալիրի մարդուն, երբ նրա մօտ  
կեանքի վերայ յայենի հայեցքներ պիտի  
մշակուեն, իւրաքանչիւրին անհրաժեշտ  
կենսական իդէալներ պէտք է կազմակեր-  
պուեն, նրա օրգանիզմի բոլոր լաւագցն  
ոյժերը կսպասուեն զուարձութիւններին  
հետամուտ լինելու վերայ և նա կմտնի  
հասուն հասակի մէջ խեղաթիւրուած հաս-  
կացողութիւններով և կեղծ, սուտ իդէալ-

Ներով։ Մեզանում ամեն աեղ տարածուած  
է նմանօրինակ բարցյական սնանկութիւնը,  
հասարակութեան բոլոր խաւերի մեջ ըս-  
կած իշխանակոն պալատներից և վերջա-  
ցրած դռնապանի խցերով։ Եւ չկ կարելի  
ասել որ կանայք իրանց կողմից առանձ-  
նապէս ձգաէին այդ չարիքին զիմապրելու,  
ընդհակառակն, նրանցից ամենամաքուրնե-  
րը անգամ, իրանք այդ չպիտենալով, յա-  
ճախակի հասարակութեան նոյն կեղծ ի-  
գէտներին են ծառայում։ Զեմ երկարաց-  
նիլ իմ խօսքը այն բոլոր ձեւերի ու մի-  
ջոցների մասին, որոնցով արտայայտվում  
է այդ ծառայութիւնը, — մէկ առանձին  
ցուցումով միայն կբաւականանամ, որ ինձ  
մանաւանդ ցանկալի է ունինդիրների յի-  
շողութեան մեջ տպաւորելու։

Պարիզում ես աեսայ ցուցահանդիսում  
մեծ արուեստագետի վրձինի տակից դուրս  
եկած պատկեր, որ ներկայացնում է Դօն-  
ֆուանին՝ բազմակինութեան իգէտական  
ներկայացուցչի այդ տիպը, մահուան գե-  
տի ալեքներով նաւարկելու բոտին։ Մա-  
կոցի զեկի մօտ կանգնած է Կոմանզօրի  
զօրեղ կերպարանքը, նրա մօտ է կանգնած

նցնապէս ինքը Դօն-ֆուանի կուրծքի վե-  
րայ խաչած ձեռքերով։ Նրա քայլուածքը  
վեհ և հանգիստ է, դէմքի վերայ առանձ-  
նապէս որոշվում են ուժեղ, բայց Ճակաար  
և մի զյզ խոր, զրաւիչ աչքեր, որոնց  
մօտով տառնց նրանց նայելու չկարելի  
անցնել։ Նրա ոտերի տակ է Դօննա Աննան  
և սրա մօտ էլ էլվիրան։ Երկուան էլ  
կոտրառում են իրանց ձեռքերը, ողբալով  
անջտառումը նրանից, նրանք պատրաստ են  
նցն խի գէպի գժոխքը հետեւելու նրան։  
Սիրի վերայ երեւում է Դօն-ֆուանի միայն  
Սպանիցում զայթակդեցրած այն «1003»  
թիւը։ Նրանք զնաս բարեաւ են ասում  
Դօն-ֆուանին, ձեռները գէպի նա տարա-  
ծելով, մի քանիօր աղաղակներով։ Հառա-  
չանիներով և ողբով միւսները այդ ժա-  
մանակ լուս յուսահատութեան մեջ են։  
Նրանց մեջ կարելի է գտնել վավաշոտու-  
թեան բոլոր տիպերը. այստեղ են և խոր-  
տեաշ, և թխահեր, և գեր, և նիշար, և  
ամբողջապէս հերարձակ երիտասարդ կա-  
նայք, և լուսնին նայող՝ ողբացող պառաւ  
կինը։ Նրանք բոլորեքեան մերկ են և չնա-  
յած զրան, ոչ ոք չունի այնպիսի բարակ

մէջք, որպիսին ունին մեր պմագլորդ  
նորաձեւ տիկնայք: Ահա ինչ բանի վերաց  
եւ ցանկանում էի ուշագրութիւն դարձ-  
նել: Ինչու մեր երիտասարդ տիկնայք և  
օրիորդները չնութեան հակառակ էն զնում,  
ինչու նրանց առաքինի մայրերը քաջալե-  
րում են այդ: Նրա համար, որ թէ սրանք  
և թէ նրանք ցանկանում են յարմարուել  
այր մարդկանց խեղաթիւրուած ձաշակին,  
որ բաղմակնութեան մէջ է կրթուել: Թէ  
պէտե ժամանակակից բժիշկները տակա-  
ւին մինչեւ հասարակութեան բարյական  
խորհուրդատուների տափառանը չեն բարձ-  
րացել առկայն այդ կողմից նրանք արել են  
այն ամենը, ինչ որ կարողացել են՝ նախա-  
զգուշացնում էին և նախազգուշացնում  
են: Իսկ երիտասարդ օրիորդները, մայրերի  
համաձայնութեամբ, այնու ամենայնիւ,  
սեղմում են իրանց մէջքը ոչ թէ կեանքի,  
այլ մահուան համար: Այժմ վերցրէք այդ  
փոքրիկ զիջը ինչպէս սահմանակէտ և նա-  
յեցէք ձեր շուրջը. մեր հասարակական  
կեանքը վխուում է նմանօրինակ բաներով,  
բայց ինքը հասարակութիւնը չի էլ կաս-  
կոծում, որ մինչեւ ականջները խրուել է  
վատ ժառանգականութեան մէջ:

Այժմ զեռ մի խօսք էլ երիտասարդու-  
թեան պիտի ասեմ, որ գուցէ լսում է ինձ:  
Նորվեղիայի միջնակարգ զինուորական  
ուսումնարաններից մէկի մէջ մի ժամանակ  
մէծ բարյազիտական տաղանդ կար իւր-  
գէն Մօ անունով, որ վերջերում եպիսկո-  
պոս եղաւ: Նա ջերմ կերպով հաւատում  
էր երիտասարդութեան բարի սկզբունքնե-  
րին և արացացած այդ խօսքով ու  
գործով, այնչափ ազգում էր իւր աշա-  
կերաների վերաց, որ նրանցից շատերը ի-  
րանց մէջ զաշն կապեցին՝ մինչեւ ամուս-  
նութեան ժամանակը մաքրութիւն և ող-  
ջախոհութիւն պահպանելու նպատակով:  
Արժէր լսել այդ մասին, —և ուրիշ կող-  
մակի երիտասարդներ սկսեցին նմանօրի-  
նակ դաշներներ և ուխտ կապել որոնք  
բաղկացած էին երբեմն երկու, երեք ան-  
գամներից միայն: Ուրեմն պէտք է հաւա-  
տալ երիտասարդութեան: Նա միշտ պատ-  
րաստ է նուիրուել բարձրագոյն և աղնիւ-  
ձգուումներին, միայն պէտք է նրան լրւրջ  
կերպով արժանաւոր նպատակ ցոյց տալ:  
Եթէ մեր երիտասարդութեան օրերում  
ծերունի մարզիկ այսպիսի ճառով զիմէին

մեզ, որպիսի ձառով ես փորձում եմ  
դիմել ժամանակակից երիտասարդութեան,  
ես կարծում եմ, մենք այլապէս կկարգա-  
դրէինք մեր կեանքը, և շատ բան հաստ-  
րակութեան մէջ ուրիշ կերպ կընթանար,  
քան այժմ է ընթանում: Բայց դրա համար  
անհրաժեշտ է, որ արդար խօսքը համար-  
ձակ և բարձր հնչէ ամեն տեղ «և ականջ-  
ներ ունեցողները թող լսեն»:

Իմ աղնիւ համախոհ կանանցից մէկը<sup>1</sup>  
Ստոկհոլմում մի անգամ ինձ հաղորդեց,  
որ տեղեկանալով սարսափելի անսուակու-  
թեան մասին, որին անձնատուր էին լի-  
նում բարձրագոյն գաղրոցական հիմնար-  
կութիւններից մէկի սաները, նա խիստ  
վախեցաւ այնտեղ կրթուող իւր որդու  
համար: Մայրը կանչելով նրան իւր մօտ,  
սկսեց աղերսել նրան պարզասիրա կերպով  
խոստովանուելու, արդեօք նա չէ մասնակ-  
ցել այդ բանին: Ոչ: Ինչու: Այն պատճա-  
ռով, որ մայրը առաջօրէն նրան նախա-  
զգուշացրել է արդէն: Կարելի է երեակա-  
յել մօր ուրախութիւնը: Ուրեմն թող և  
միւս մայրերը աշխատեն իրանց երեխանե-  
րից այդպիսի ուրախութիւն տեսնելու:

Թող երիտասարդ կանայք նախ քան  
ամուսնանալը, համնզուեն աղամարդի բա-  
րոյական հաստատութեան մէջ, այն աղա-  
մարդի, որին նրանք պատրաստ են իրանց  
ձակատաղիրը հաւատալու: Ժամանակ է  
այժմուանից բազմակնութեան հետեղնե-  
րի ամուսնական անպատճանատւու-  
թիւնը արմատից կարել: Իսկ այդ անելը  
և հասարակութեան սուտ իդէալները փոշի  
դարձնելը ամբողջապէս կանանց ձեռ քումն  
է չէ որ նրանց ձեռքումն է մանուկների  
դաստիարակութիւնը:

Վ Ե Ր Զ.

19 APR 2013

Հայաստանի Ազգային գրադարան



NL0445830

488 16

88 26

ԳԻՆՆ Է ՅՕ ԿՈՊԵՒ.

1600